№ 7 (173) XVI ՏԱՐԻ ՅՈՒԼԻՍ 1906

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ԴՈՒՄԱՆ ՄԵՌԱՒ, ԿԵՑՑԷ ՍԱՀՄԱՆԱԳԻՐԸ

Նոր ուկազ—„Լուծում եմ Դուման": Բժանովեան այլասերուած տոհմի փուչ շառաւիղը, վիթխարի իր ոչնչութեան մէջ, և ոչինչ՝ գահական բարձրութեան վրայ, դարձեալ մի անգամ դրժեց իր օգոստափառ խոստումը,—պատռեց Հոկտեմբերեան մանիֆեստը, սեփական բերանով թքեց իր ստորագրութեան վրայ, դարանամուտ գողի նման փակեց Տաւրիկեան պալատի դռները և եզակի լրբութեամբ „հայր" տիտղոսը իր ոճրագործ ճակատին դրոշմած՝ կոչ է անում, արքայական կոչ, „զաւակներին համախմբել իր շուրջը՝ սրբազան հայրենիքի վերածնութեան համար":

Գահական խաբէութիւն: Ոչ թէ „սրբազան հայրենիքի", այլ „սրբազան խուլիգանութեան" վերածնութիւն է այդ, որ հովանաւորուած Պետերհոֆեան աւազակախմբի արիւնոտ վահանով՝ պիտի փորձի սարսափի մէջ խեղդել Մեծ Յեղափոխութիւնը, արիւն, կրակ և աւեր տարածել բոլոր վայրերում, ուր դեռ կայծում է միտքը, խիղճը, աշխատանքը, ուր դեռ հընչում է յեղափոխութեան շեփորը, միապետութեան թաղման, այդ վաղածանօթ ահազանգը:

Մարդակերների վոհմակը, առժամապէս ցրուած իր անմատչելի դիրքերից, բայց վերջերս խրախուսուած արտաքին փոխառութեամբ և ներքին „չափաւորներով", ուշքի է գալիս, գլուխ է բարձրացնում: Հնագոյն ինկվիզիտորը, Պօբեդոնոսցեվ, նորից ոտք կոխեց „խռովկան" պալատը. մայր-թագուհին, այդ գարշելի կեղտը մայր անուան, վերստին գրաւեց կորցրած դիրքը. Տրեպով, Իգնատիեվ, Դուրնովո, Ստոլիպին մարդագազանները ժպիտով շտկեցին կորացած մէջքերը, և շրջապատուած անձնուէրների զօրախմբով՝ ստեղծագործեցին յուլիսեան մանիֆեստը, մի մարտահրաւէր բանական Ռուսաստանին, սպառնալիք ոչ միայն քաղցրախօս Դումային, այլ և նրանց, որոնք խօսքի հետ ռումբ ունեն, ճառերի տակը՝ դաշոյն...

Այդ անարգ մանիֆեստը՝ սարսափի, երկչոտութեան և քարացած մտքի յուսահատական կոչ է, մէկը այն ամօթալի պաշտօնագրերից, որոնք դարեր ու դարեր պիտի կազմեն սլավ միապետութեան անջնջելի նախատինքը: Եւ նրա անանուն ու ծիրանակիր հեղինակները, խելագար երկիւղից, յիմարացած իշխանութեան կորուստից, տգէտ պատմութեան մէջ, կուրացած ու գլխակորոյս՝ անկարող են նախատեսնելու, որ յուլիսեան „պետական հարուածը" ազդակն է հանուր ցնցման, աղբիւրը ժողովրդական անծայր ատելութեան, որը՝ այսօր չէ վաղը պիտի պահանջի, իբրև գրաւական և հատուցումն, Գահակալի գլուխը, Զմեռային պալատի աւերումը, և կորուստը ոճիրի բոլոր հեղինակների, մինիստր թէ գեներալ, թագուհի թէ թիկնապահ...

Վաղամեռիկ Դուման յեղափոխութեան խցանն էր: Անգլուխ Նիկոլայ այդ չ'ըմբռնեց: Տաւրիկեան պալատի օրինագծերը՝ պատանդանը խաղաղ բեֆօրմերի: Հազարագլխեան կամարիլլան այդ չը հասկացաւ: Եւ ահա 70 օր շարունակ՝ ի լուր աշխարհի տանջած ժողովրդին հանգստութիւն և համբերութիւն քարոզող կաճառը, հիւսթափուած „փոքրիկ աստծու" ստոր խաբէութիւններից, վիրաւոր՝ ցարական մտրակից, որ ուկազ անունն է կրում, ցնցուեց, յեղափոխուեց, և հպարտ Ֆինլանդիայի գիրկը ապաստանած՝ հնչեցրեց իր պատգամաւորական կոչը.

„Քաղաքացիներ. Ոտի կանգնեցէք՝ պաշտպա-
„նելու ձեր իրաւունքները... Կառավարութիւնը իրաւունք
„չունի, առանց ժողովրդական ներկայացուցիչների հա-
„մաձայնութեան, հարկ հաւաքել և ժողովրդին զինուորա-
„կան ծառայութեան կանչել: Հետևաբար ո՛չ դրամ և
„ո՛չ զինուոր... Կոպէկ մի տուէք գահին, և ո՛չ էլ զինուոր
„բանակին: Հաստատուն եղէք ձեր մերժման մէջ: Ոչ մի
„այժ չէ կարող դիմանալ ժողովրդի միաբան և անընկճե-
„լի կամքին":

Մարտական խօսքեր են դրանք, արտասանուած երեկեան չափաւորների բերանով, անվստահութեան պաշտօնական քէ՝ դէպի ցարը, դէպի պալատը, դէպի բէժիմը: „Ոտի կանգնեցէ՛ք"—ահա օրուայ ազդանշանը, քաղաքական միակ հաւատամքը ուղղած աշխատաւոր ժողովրդին, նրան, որ տանջուեց, բայց հաւատաց, ու հաւատալով ոտի տակ գնաց...

Այլ ևս ոչ մի հաւատ, ոչ մի զիջումն, ոչ մի ուղերձ: Կռի՛ւ յանուն ազատութեան, ազատամարտ՝ յանուն ժողովուրդների: Ժողովրդական կամք՝ միապետի կամքի փոխարէն—ահա միակ գրաւականը, ապահովութեան միակ յենարանը:

Դուման մեռաւ, կեցցէ՛ ժողովուրդը:
Դուման մեռաւ, կեցցէ՛ սահմանադիրը:

ՆԱԽԱՏԻՆՔ ԵՒՐՈՊԱՅԻՆ

Խորագրեալ յարգանքով է, որ հրատարակում ենք „Դրօշակի մէջ" Էլիզէ Ռըկլիւի այս գանձելի տողերը, նուիրուած մեր տառապանքին և մեր դատին։ Դա ֆրանսերէն անտիպ ձեռագրի հարազատ թարգմանութիւնն է, որ պատեհ ենք համարում ի լոյս ընծայել՝ հուշակաւոր աշխարհագրի մահուան առաջին տարեդարձի առիթով։

Աշխարհի վրայ կա՞յ արդեօք մի վայր, որու անունը կարենայ մեզ աւելի յուզել քան «Հայաստան» անունը։

Մտածող մարդկութիւնը միշտ պիտի պահէ Հայաստանի համար ինքնաբուխ յարգանքի զգացումը, որ ասիական հնութիւնը մեզ կտակած է։ Մեր ոգիին աչքերու առջև միշտ պիտի ցցի Մասիսի, մեր պատմական և աւանդական Արարատի, գերապանծ և այնքան հրաշալիօրէն կանոնաւոր պատկերը։ Անշուշտ հին հրաշքներու սնապաշտութիւնը ջնջուած է և անոր գագաթին փալփլող սպիտակութեանը վրայ այլևս չեն փնտռեր սևորակ կտորները Տապանին, ուր իբր թէ մեր Նախահայրերը ապաստանած են։ Բայց խորհրդանշանները այսուհետև անօգուտ են, որովհետև բնագէտներու, ազգագիրներու, պատմագիրներու գիտութիւնը մեզ կ'ըսէ թէ հայկական բնաշխարհը որքա՜ն կարևոր եղած է բոյսերու, կենդանիներու և ժողովուրդներու ցրումին մէջ։ Այդ վայրը՝ գերազանցօրէն հասարակաց հայրենիքն է, կանխագոյնը մեր մասնաւոր հայրենիքներու։ —Ֆրանսացիներ, անգլիացիներ, գերմաններ և իտալացիներ, բոլորս դեռ կ'երազենք տեսնել այդտեղ՝ վերին Ասիոյ մէջ՝ երեսը Կովկասին դարձուցած այն ուիրական վայրը, որ նախնիքներու օրրանը եղաւ։

Սակայն ժառանգական փառքը միշտ բախտաւորութեան հետ չ'ընկերանար։ Նորագոյն բոլոր ժողովուրդներու մէջ կա՞յ մէկը, որ դժբախտութեամբ գերազանցէ հայ ժողովուրդը։ Քաղաքական երեք տարբեր հատուածների բաժնուած, ոչ մի տեղ անոնք չեն նկատուիր իրենց տան մէջ։ Ամէն տեղ օտարի մօտ կը բնակին և քանի՜ անգամներ այդ օտարը եղած է նոյնպէս և իր հարստահարողն ու թշնամին։

Ե՞րբ ուրեմն «ազգերու հաւասարակշռութիւն» կոչուածը պիտի կրնայ մոռացնել տալ թագակիր դահիճներու նկատմամբ ունեցած իր ստորութիւնը, իր վատութիւնը։ Մեր վրայ ծանրացող բոլոր ստորացումներէն չկայ մէկը, որ աւելի ծանր ըլլար, աւելի դժուարակիր։ Եւ իրենց միամտութեան մէջ՝ դժբախտ հայերը դեռ մեզի պատիւը կ'ընեն իրենց ծայնը դէպի մեզ բարձրացնելու, մեզ՝ դաւաճաններուս, վախկոտներուս և կեղծաւորներուս, որ մի քանի ամչկոտ բառերով զանոնք կ'ուղարկենք տիրոջ մը կարեկցութենէն միւս տիրոջ գթութեան,—այսինքն մահէն ի ստրկութիւն, ստրկութենէն ի մահ։

ԷԼԻԶԷ ՐԸԿԼԻՒ

„ԴՐՕՇԱԿԻ" ԱՐԳԵԼՈՒՄԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Վերջին րոպէին տեղեկութիւն ստացանք, որ „Դրօշակի" մուտքը արգելուած է ամբողջ Պարսկաստանում։ Ահա պաշտօնական կարգադրութեան հարազատ պատճէնը.

ՓՕՍՏԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

3 յուլիսի, 1906
№ 319
ԹԷՀՐԱՆ

Փոստե՞ի եւ մամսաՏեՏերի
Ընդհանուր պ. վերաՏեսչին

Պատիւ ունիմ ձեզ ծանուցանելու, որ կառավարութիւնը արգելեց մուտքը և տարածումը Պարսկաստանում հայոց „Դրօշակ" լրագրի, որ խմբագրւում է Ժընեվի մէջ հայ յեղափոխական կոմիտէի ջանքերով։

Դուք կը բարեհաճէք ուրեմն հրահանգ տալ ձեր տեսչութեան ներքոյ գտնուող դիւանատանը՝ որ այդ լրագրի համարները գրաւեն և ձեզ ուղարկեն։ Այդ օրինակները պիտի ոչնչացին ձեր ներկայութեամբ և պէտք է կազմել արձանագրութիւն՝ ընդունուած ձևով։

Նոյն արգելումը վերաբերում է և այլ և այլ յեղափոխական բրոշիւրներին, հայերէն լեզուով, որոնք մի քանի ժամանակից ի վեր մտցնւում են Պարսկաստան՝ բաւական մեծ քանակութեամբ։ Այդ բրոշիւրները պէտք է ենթարկուին նոյն վիճակին, ինչ և „Դրօշակը"։

Ի դիմաց մաքսային եւ փոստային Մինիստրի՝
Ընդհանուր գանձարանի կառավարիչ
(Ստորագրութիւն)

Պարսից իշխանութեան այդ անտեղի, չը մտածած և անարդար կարգադրութիւնը մի օրգանի վերաբերմամբ, որ 16 տարուց իվեր ազատ մուտք ունի այնտեղ, և որը երբէք չէ զբաղուել այդ երկրով և նրա կառավարութեամբ—միայն մի բացատրութիւն ունի, այն՝ որ այդ կարգադրութիւնը տեղի է ունեցել ցարի կառավարութեան ճնշման տակ և նրա պահանջմամբ։ Մենք հաստատ և գաղտնի տեղեկութիւն ունենք, որ այդ արգելման մասին դիմումն է եղել Թէհրան դեռ անցեալ տարի յունիսին՝ առիթ բռնելով 1905 թ-ի „Դրօշակի" № 5-ը, ուր գետեղուած են խիստ յօդուածներ ցարական բէժիմի դէմ։ Եւ կամենալով հաճելի լինել Թէհրանի ռուսայ դեսպանութեան՝ պարսից իշխանութիւնը հրամայում է բռնել և այրել „Դրօշակը" և „Դրօշակի" խմբագրութեան բոլոր հրատարակութիւնները, մինչդեռ նոյն երկիրը մուտք ունին եւրոպական և ռուսական ամեն տեսակ թերթեր...

Եւ իբրեւ այս կարգադրութեան, Թաւրիզում, ինչպէս մեզ հեռագրում են այնտեղից, արդէն գրաւեց և այրեց „Դրօշակի" վերջին՝ 6-րդ համարը, ամբողջ կապոցներով։ Նոյնը և սահմանագլխի մի քանի այլ քաղաքներում։

„Դրօշակը" երբէք մուտք չ'ունի Թիւրքիա,—դա բնական է։ Նրա մուտքը արգելուած է և Ռուսաստան, նոյնիսկ հոկտեմբերեան կոմիկ մանիֆեստից յետոյ—այդ էլ հասկանալի է։ Բայց արգելք դնել և Պարսկաստանի համար—դա մի կարգադրութիւն է, որի հետ մենք հաշուել չենք կարող և չենք ուզում։

Արձանագրելով այս փաստը, „Դրօշակի" խմբագրութիւնը միաժամանակ հարկաւոր դատեց դիմել Թէհրան՝ պարսից բարձր կառավարութեան, բողոքելով յիշեալ կարգադրութեան դէմ։

ԱՐԻՒՆՈՏ ՏԱՍՆԱՄԵԱԿ—ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆ

(1896—1906)



ՊԵՏՕ
Ա. ՊԵՏՐՈՍԵԱՆ
(Իռճակցական)



ՄԱՐՏԻՆ
(Հնչակեան)

Մ. ԱՒԵՏԻՍԵԱՆ
(Արմենական)

ՆԻԷՐ

Կռուի դաշտում միացող յեղափոխականներին

Յունիս երե՛ք...

Յիշատակները ուժգին թափով յուզում են կրկին, արիւնոտ օրերի արիւնո՜տ յիշատակներ... Ուղիղ տասն տարի առաջ էր, երբ սճրագործի հրեշային բազուկը Վանի վրայ էլ բարձրացաւ, մահացու հարուած տալու հայ ժողովրդին։ Ու պայթեցին հրացաններ, շղացին դաշոյններ, սև ծուխը բռնեց երկինքը...

Տասնամեակը լրանում է։ Հին վէրքերը թող բացուին... Թանկագին սուրբերը թող վե՞ր կենան մնաւոր դաշտերից ու խօսին մեր սրտին։ Անսահման ոգևորութեամբ ու հիացմունքով յիշե՞նք կրկին անմահ Աւետիսեան, վառվռուն Մարտիկ, մեր անմահ Պետօն և այն ծաղկահասակ կեանքերն ու հերոսները, որոնք նրանց հետ Կիւզելտերէի, Դարահիսարի, Թարթողիմէոսի կռիւներում և անբաղդ Մուշեղի հետ միասին Սալմաստի լեռների վրայ կուրծք տուին՝ արիւնոտուած հայրենիքը պաշտպանելու համար։ Ո՞վ տեսաւ նրանց մահը. բարձր ու ձիւնապատ սարերն էին միայն արձագանքում այն հոնդիւնները, որ անարդ դուշմանի դնդակից ընկած հերոսները արձակում էին մահուան ժամին, մինչ կարմիր արիւնը ժայթքում էր լայն վէրքերից ու ներկում հայրենի հողը։ Սիրելիների քնքոյշ մատները չծածկեցին մահուան տագնապից լայն բացուած աչքերը, որոնք մնացին բաց, մի՛շտ բաց, դէպի վեր՝ կապոյտ երկնքին յառած։ Ոչ ոք պատանի մէջ չփաթթեց նրանց մարմինը. ատուածային մեղեդիները չհնչեցին դագաղների շուրջը և անուշահոտ խունկը չծխաց նրանց անյայտ շիրիմների վրայ։ Շատերին մայր հողն էլ չդրկեց, ու անթաղ, բաց երկնքի տակ մնացած դիակների վրայ գիշերն իր ցօղը սփռեց, ցերեկն իր արևը. և անձրևն ու կարկուտը իրենց հեղեղներով ողողեցին նրանց, մինչ գիշատիչ ուրուրները ու արծիւներն պտոյտ էին տալիս ընկածների գլխին... Անցաւ տաս տարի. քամին ցրուեց նրանց աճիւնները. բայց հերոսների պայծառ յիշատակը արևից էլ վառ շողեր է սփռում։

Ծնողնե՛ր, շշնջացէք կրկին թանկագին անունները ձեր որդիների, որոնք նոյնպէս ընկան հեղ պայքարում։ Քոյրե՛ր, յիշեցէ՛ք ձեր եղբայրներին, որոնք մեռան ձեր պատուի պաշտպանութեան համար։ Հարսնե՛ր, մի՛տ բերէք ձեր փեսաներին, որոյ ծաղկալից կեանքի թելը կտրեց անարդ դուշմանը։ Սովրեցրէ՛ք ամենքին, որ մեր դժբախտ երկրում արիւնը արիւնով է մաքրւում միայն։ Եւ դու, արիւնի ու տառապանքի աւազանում մկրտուած երիտասա՛րդ սերունդ, տաս տարիների յուսահատութեան ու լքումի շրջանն անցկացրիր, զարթի՛ր և յառա՛ջ տար այն գործը, որի դրօշի տակ ընկան ձեր մեծ եղբայրները։ Անարգ դուշմանը քար ու քանդ կանի մեր անտէր երկիրը, ծխացող աւերակների, սեւացած դիակների մի կոյտ կը դարձնի, եթէ հուժկու բազուկով դէմ չկանգնես և կուրծքդ լայն բացած չկռուես նրա պաշտպանութեան համար։ Եթէ չյաղթես իսկ, գէթ կը մեռնիս հերոսի մահով, այն գիտակցութեամբ, թէ պարտականութիւններից ամենից վսեմն կատարած եղար. յիշի՛ր Պետօին, Մարտիկին, Աւետիսեանին և նրանց հետ ընկած բոլոր կտրիճներին և սրտի խորքերից շշնջի՛ր.—Յարգա՞նք ձեր յիշատակին, ձեր մահը զուր չէ անցած. ահա մենք վերցնում ենք այն դրօշակը, որի տակ ընկաք դուք, և յառաջ կը դիմենք։ Յուսահատութեան, լքումի բոպէներին՝ ձեր յիշատակը մեր սրտին ոյժ, մեր հոգիներին կորով, մեր քայլերին վստահութիւն պիտի տայ։

Յարգա՞նք ձեզ։

Հ. Յ. Դ.
Վասպուրականի Կ. Կոմիտէ.

Վ Ա Ն
3 յունիսի, 1906

ՅՈՐԴՈՐՆԵՐ ԵՒ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ՀԱՅԴՈՒԿՆԵՐՈՒՆ

(Անցիպ ձեռագրէ մը)

II

Մեր մէջ յաճախ արծարծուած է հայ-քրդական միութեան միտքը և դեռ կը խօսուի ատոր մասին։ Հասկրելի միտք, բայց դժբախտաբար առ այժմ անիրագործելի։

Ինչո՞ւ քիւրդը միանայ հայու հետ։ Մէկ կողմը ձըգենք կրօնական և ցեղային տարբերութիւնները, որ ներկայիս մէջ դեռ ևս մեծ դեր կը խաղան։—Քիւրդը լիովին ձեռք բերած է իր „ազատութիւնը“. ոչ զօրք կուտայ և ոչ տուրք, ո՛չ կը թալանուի, ոչ ալ պատիւը կը բռնաբարուի։ Այս չարիքներէն ապահով և ազատ մնալէ զատ՝ ինք զինուած քեզ կը թալնէ, կը սպաննէ, քու պատիւդ կը բռնաբարէ, քու հարստութիւնդ և քրտինքով ձեռք բերած օրական ապրուստդ ձեռքէդ կը խլէ ու կուտայ հրացանի, կը գտնէ առատ փամփուշտ, կը հեծնէ լաւ ձի մը ու ազատ կը պտտի լեռներն ու դաշտեր։

Մեզմէ շատերը խօսեր են քիւրդ ցեղապետներու հետ։ Անոնք այս միտքը յայտնած են թէ „Մենք օրուան եղանակին կը հետևինք։ Ձեր շարժումներուն, պատրւակով կառավարութիւնը մեզ թոյլ տուած է ամէն բան ընելու և վայելելու։ Այսօր այսպէս կը վարուինք և եթէ վաղն ալ որևիցէ փոփոխութիւն մ՝ ըստացաւ երկիրը, այն ատեն ալ կը հետևինք այդ փոփոխութեան“։ Եւ կատարեալ անկեղծութեամբ ճշմարտութիւնը կը խոստովանին ըսելով. „Մենք ձեզ կը սպաննենք, կը հալածենք, կ՝անպատուենք, եթէ ուզենք ձեր աղջիկները կը փախցնենք, կառավարութիւնը ոչինչ չը՝ներ մեզ, ընդհակառակը՝ կը քաջալերէ“։

Քիւրդերու մէջ կան ա ն հ ա տ ն ե ր, որոնք որոշ բարիք և ծառայութիւն կ՝ընեն մեզ, այն ալ շատ գաղտնի։ Ասոնք ալ կառավարութենէն դառնացածներ են։ Կառավարութիւնը կամ հայրերնին աքսորած է կամ պապերնին։ Կան նաև բացառիկ անհատներ, որոնք գիտակցութեան եկած են, կը տեսնեն կառավարութեան ըրած գաղանութիւնները և կը մտածեն իրենց ապագան, և մեզ կընեն մասնաւոր բարիքներ, բայց շատ վախով և զգուշութեամբ։ Կառավարութիւնն է քիւրդերուն ամէն բան թելադրողն ու թոյլ տուողը։ Ռուսական սահմանէն բռնած մինչև երկրի խորքերը բոլոր քիւրդ ցեղերն սուլթանի համար՝ բերդեր և թնդանօթներ են։ Քրդական ցեղերը շատ ու շատ են, Հայտարանցին, Ջալալցին, Սիփիկցին, Հասանանցին, Ճիպրանցին, Շէկայ տունը, Պէլլէկցին, Պդրցին, Խէրզանցին, Պոզկցին, Պոտկանցին, Խիանցին, Սուլուխցին, Բագրանցին, Ռըշկոթանցին, Մլանցին և դեռ շատեր։ Այս բոլոր ցեղերը կրնան 15000 զինուած մարդ հանել չը՝ հաշուած այն ցեղերը, որոնք զէնք չունին։ Ասոնք կապրին մեր երկրի մէջ՝ տարածուած պարսից և սուսաց սահմանագլուխները, Վանի հիւսիսային կողմը, Ալաշկերտ, Սիփան, Բաղէշ, Խնուս, Սասուն՝ մինչև Տիգրանակերտ։

Այս բոլոր ցեղերը այն ժամանակ կը միանան մեզ հետ, երբ սուլթանական գաղանային բէժիմը երկրէն վերանայ։ Այսօր մենք միանակ ենք կուռոդ և կը տանջուինք անոնց ձեռքը, վաղն ալ երբ երկիրը մեր ջանքերով և արիւնով փոփոխութիւն մը կրէ, պիտի միանան մեզի հետ և հաւասար իրաւունքի տէր պիտի դառնան, ինչպէս իրենք ալ կ՝ըսեն։

Որևիցէ տեղ երբ քիչ մը ուժ կը կազմենք, ուժի ազդեցութեան առջև կը խոնարհին, և կը սկսին բարեկամութիւն ընել, բայց երբ կառավարութիւնը կը հրաւիրէ և հրաման կընէ զարնելու, ամենէն առաջ նոյն բարեկամութիւն ընող ցեղը կուգայ զարնելու. եթէ չգայ, կառավարութիւնը որևէ պատճառ մը բռնելով կը յարձակի նոյն ցեղի վրայ և կ՝ոչնչացնէ։ Երբ նոյն ցեղը կը տեսնէ որ կառավարութեան հրահանգով 10—20 ցեղեր եկած են կռուելու, ինք չէ կարող չէզոք մնալ. ստիպուած է մասնակցելու։ Մեր խօսքը այն ցեղերու մասին է, որոնք կառավարութենէն ցաւած են և անոնց թիւը շատ աննշան է։

Սուլթանը առ հասարակ բոլոր ցեղերու շէյխերուն և ցեղապետներուն նշաններ և մասնաւոր ընծաներ կը ղրկէ միշտ և շէյխերը կ՝աշխատին ցեղերն իրարու հետ հաշտ պահել։ Երբ կառավարութիւնը պատերազմի հրաման տայ, առաջ շէյխերը վեր կը կենան, իսկ ժողովուրդը ստիպուած է հետևելու խոնարհութեամբ։

III

1. Քիւրդ անհատներու հետ բարեկամութիւն և յարաբերութիւն ունեցիր, բայց չը՝ լլայ որ վստահիս, միշտ զգոյշ մնացիր։ Անոնց բարեկամութենէն այսպէս օգտուիս. անոնք քու դրամով քեզի համար արծիճ, վառօդ, ծծումբ և ուրիշ նիւթեր կը բերեն։

2. Կը պատահի որ քիւրդերը կը հիւրասիրեն քեզ, հաւատ չը՝ ընծայես։ Կամ անոնց հացը չը պիտի ուտես, կամ եթէ չես ուզեր զանոնք անպատուել, սեղանին քեզի հետ նստեցուր շատ յայտնի քիւրդեր՝ աղաներէն։

3. Քիւրդերու հետ բարեկամութեան ժամանակ սովորաբար զէնքի փորձերի կը հրաւիրեն քեզ, պէտք է որ միշտ լաւ նշան առնողներ վերցնես հետդ։

4. Կռուի ժամանակ առհասարակ պէտք է քիւրդէն զգուշանալ։ Անոնք աւելի ընդունակ են կռուելու. ծանօթ են դիրքերուն, իրենք զիրենք լաւ կը պահեն և օձի պէս դիրքէ դիրք կը սողան։ Իսկ թիւրք զօրքը տեղին անծանօթ է և թագնուիլ չէ կարող. անոնք կը նային հրամանատարի հրամաններուն և փողերու ձայնին։ Ցասը ֆէդայի ուրախութեամբ կը կուին 100—200 զինուորի դէմ։ Եղած է ժամանակ, որ տասը հոգիով կռուած են 1000-ի դէմ և առանց զոհ տալու յաջողութեամբ դուրս են եկած։ Սահմանագլխի քիւրդերը թէև զինուած են կանոնաւոր հրացաններով, բայց առանց զօրքի օգնութեան կռուիլ չեն կարող։

5. Կռիւներու ժամանակ զօրքերը ֆէսերնին, իսկ քիւրդերը քոլոզնին կանցնեն հրացաններու ծայրը և կը խաղցնեն, կամ կը դնեն քարերու կամ գիւղի պատերու վրայ և կը խաբեն ձեզ, որ պարապ տեղ փամփուշտ վատնէք։ Զգինի թէ խաբւիք, գիտակով նայեցէք և յետոյ զարկեցէք՝ եթէ երևցողը իսկական գլուխ է։ Առհասարակ երբ անոնք գան՝ ս ա ղ ա ա թ կուտան, մեծ հարայներ կ՝ընեն և իրարու կ՝ըսեն „Հա՜յ փախա՜ն, հա՜յ փախա՜ն“ գիրար քաջալերելու համար։ Աղմուկ, աղաղակ կը բարձրացնեն, ձայներնին երկինք

գետին կը լեցնէ, երբեմն շան պէս կը հաչէն, գայլի պէս կ'ոռնան. ամէն մէկէն մի տեսակ ձայն կուգայ, որպէսզի դուք չփոթուիք։ Ոչ մի կարևորութիւն չտաք. դուք լաւ խփելնուդ նայեցէք. երբեմն դուք ալ հարայ հուրայ ըրէք և պօռացէք թէ՝ „ձեր գնդակները մեզ չեն հասնիր, մօտեցէք կուինք"։

Երբեմն ալ խորամանկութիւններու կը դիմեն. օրինակ մէջերնին ճարպիկ մը կողքը կուտայ ձեր կողմը, երկու քայլ վազելով կ'երթայ, դուք՝ զարնուած կարծելով՝ կը բարձրանաք նայելու, այն ժամանակ անոր միւս ընկերները ձեզ լաւ կը տեսնեն և կը զարնեն։ Նա զարնուած չէր, դիտմամբ կ'ընէր. նորէն վեր կը կենայ և կը մտնէ քարերու ետևը։ Զգոյշ եղէք, որ այս ձևի խորամանկութիւններուն զոհ չ'երթաք։

ԱՆԴՐԱՆԻԿ

ԶՕՐՔՆ ԷԼ Է ԸՄԲՈՍՏԱՆՈՒՄ

(Ծրջաբերական)

Ընկերներ!

Գերագոյն ոճիրներից մէկն էլ կատարուելու վրայ է։

Ռուսական յանցապարտ կառավարութիւնը՝ տարուած նեղ կաստայական տենչերով՝ հոգեվարքի օրերին անանգամ շարունակում է արեան և սարսափի իր քաղաքականութիւնը։ Ցանձին ամենուրեք տարածուած զինուորական դատարանների՝ նա դիւային սառնասրտութեամբ և փութկոտութեամբ հնձում է բազմաթիւ հերոսական կեանքեր և ոտքից մինչև գլուխ արիւնաշաղախ՝ երազում է թէ այդօրինակ անարգ զէնքերով կարող կը լինի վերջ դնել ժամանակակից անարխային և վերականգնել գահավիժող իշխանութիւնը։

Նողկանք և անծայր ատելութիւն, ահա այն զգացումը, որով համակուած է այժմ բովանդակ զգացող և պայքարող Ռուսաստանը։ Բազմամիլիոն ազգաբնակութեան մէջ է՛լ խաւ չը մնաց, որը շարունակէր բարեացակամ լինել դէպի կառավարութիւնը։ Բուրժուազիան անգամ վերջնականապէս երես է դարձրել բիւրօկրատիայից, նա ևս իր փրկութիւնը տեսնում է ներկայ կարգերի տապալման և բուրժուական նոր կարգերի վերստեղծման մէջ։

Միակ հզօրագոյն պատւանդանը արդի կառավարութեան՝ մնում էր զօրքը, նա ևս այժմ „դաւաճանում է"։ Գիւղացիութեան և բանւորութեան առաջընթաց շարժման ազդեցութեան տակ սլիններ և թնդանօթներ այդ համատարած բանակն անգամ կամաց կամաց արթնանում է և կանգնում յեղափոխութեան կայուն և հերոսական ուղիի վրայ։ Իր երկաթէ բազուկներով նա ևս գալիս է խոցելու պայքարողների առանց այն էլ բազմաթիւ շարքերը և այդպիսով մօտեցնում է վերջին և յաղթական ճակատամարտը։

Իսկ խելագար կառավարութիւնը տակաւին չէ մոռանում կռւի իր հին ձևերը, գնդակահարութեան և յարաճուն կախաղանների իր յաճախ սրբագործուած քաղաքականութիւնը։

Այսօր մենք կանգնած ենք նիւթուող նոր ոճիրների դիմաց։ Զինուորական դատարանը այսօրուանից ունկընդրում է Մինգրէլեան գնդի 27 զինուորների գործը։ Բաւական չէր այն, որ վերջիններիս շրջապատել էին միտինգի ժամանակ, դաւադիր նկատումներով մի քանիսին սպանոտել և վիրաւորել, այժմ նորից սպառնում են մեր առանց այն էլ վիրաւոր ուշադրութիւնը տոչորել զոհուող նահատակների նորանոր տեսիլներով։

Ընկերներ, լաւ իմացէք, որ ռուսական բռնապետութիւնը ապրում է իր գոյութեան վերջին հէքը և որ մեր դիմացկանութիւնից և համբերաշխութիւնից է կախուած նրա վերջնական տապալումը։ Արձագանք տանք ընկեր զինուորականների վերաբերմամբ կատարուող եղեռնագործ անարդարութեան, դադար տանք մեր բոլոր պարապմունքներին և թող որ ապուշ կառավարութիւնը մի անգամ ևս զգայ, որ իր բոլոր քայլերին հետևող կայ, որ աշխատաւորների կազմակերպուած բանակը ամեն րոպէ պատրաստ է նոյնիսկ արեան և ծանրը զրկանքների գնով մաքառելու ամեն տեսակ վայրագութիւնների դէմ։

Կորչի զինուորական դատարանը!
Կորչի մահւան պատիժը!
Կեցցէ ժողովրդի և կռւող զինուորների միութիւնը!
Կեցցէ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը!

Հ. Յ. Դ. ԹԻՖԼԻՍԻ ԿԵՏՐ. ԿՕՄԻՏԷ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՆԱՄԱԿ ԿԻԼԻԿԻԱՅԷՆ

ՄԵՐՍԻՆ, 8 յունիս

Թլանի խնդիրը տակաւին առկախ կը մնայ։ Կիլիկիոյ կաթուղիկոսը հրաժարեցաւ և միշտ կը պնդէ իր հրաժարականին վրայ։ Այս նամակաւ քանի մը լրացուցիչ տեղեկութիւններ կ'ուզէինք տալ այդ հարցի մասին։

Գաղթականներու տաճկական յանձնախումբը իր տեղեկագրին մէջ երկու պատճառաբանութեան վրայ կը հիմնի Թլանը գրաւելու համար, զորս հելքելու համար հետևեալ փաստագրերը կը գտնուին Կիլիկիոյ կաթողիկոսութեան ձեռքը։ ա) Թլանը դարերէ ի վեր այս վանքին կը պատկանի. այս սեփականութիւնը կը հաստատէ Գօզան օղլուներու 1257 ռէպիւլէվվէլ 23 (ըստ տաճկական տոմարի) թւակիր մէկ վաւերագիրը։ Գիտէք որ Գօզան օղլուներն են որ կիշխէին Կիլիկիոյ լեռնային մասին մինչև տակէ 40—50 տարի առաջ։ բ) Էնգարէի վալիին 1266 շէվվալ 5 թւակիր մի պույրուլթին (հրաման) գ) Եօզղատի կառավարչին 1276 թւակիր մի պույրուլթին. այս պույրուլթիներով վերոյիշեալ կառավարիչները Գօզանի կառավարութեան հրահանգ կուտան, որպէսզի „Վանքի" սեփականութիւնը եղող Թլանը պաշտպանի մասնաւորներու ոտնձգութեանց դէմ։ դ) Գօզանի դատարանին 1299 հազիրան 16 թւակիր մի վճիռ կը հաստատէ Վանքին իրաւունքը Թլանի վրայ։ ե) Տեղային կառավարութեան այլևայլ մազպաթաները (տեղեկագիր)։

Կառավարութիւնը առժամապէս յետաձգած է գաղթականներու հոն տեղաւորելու խնդիրը. բայց դեռ կը պնդէ որ Թլանը Վանքին սեփականութիւնը չէ և

կառավարութիւնը իրաւունք ունի զայդ գրաւելու. Կիլիկիոյ կաթողիկոսութեան համար կենսական հարց մըն է այս։ Վանքի եկամտին մէկ աղբիւրը Թլանի ագարակն է. զայդ գրաւել Կիլիկիոյ հայ համայնքին հարուած մը տալ է։ Արդէն կառավարութիւնն ալ քաղաքական թաքուն նպատակներով է որ Թլանը կը գրաւէ։

Ամենավերջին լուրերուն նայելով՝ կառավարութիւնը հաւանօրէն ստիպուած պիտի ըլլայ զիջանիլ...

—

Կեսարիոյ խնդիրը ժամանակին չը կրցանք տեղեկագրել։ Տինամիթի ռումբ մը կը գտնուի Թուրքի մը քով, խնդիրը հայերուն կը վերագրեն և ձերբակալութիւնները կսկսին։ Քսանի չափ հայեր ձերբակալուեցան։ Բանտի մէջ սոսկալի չարչարանքներու ենթարկած են խեղճերը. միջնադարեան չարչարանքի սիստեմն է որ գործադրուած է, եղունկներուն մէջ շէկացած շամփուրներ խօթել, գիշեր ցերեկ ծեծել և այլն... Չէք կրնար երեւակայել, թէ խեղճերը որպիսի անտանելի տառապանքներու ենթարկուած են. ամերիկացի միսիոնէր մը, *Mr. Dotte* քննութիւն կատարած և եղելութիւնը տեղեկագրած է իր երկրին։ Ոեւէ ապացոյց չկայ հայերու մեղաւորութիւնը հաստատող, բայց անմեղներն միշտ բանտն են...

ԲՈՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՇԱՐԱՆ

(Եւրոպացիի մը նամակէն)

—

ՏՐԱՊԻԶՈՆ, յունիսի 7

Մայիս ամիսը որ Եւրոպայի մէջ ուշադրութիւն գրաւող ամիսն է, Տրապիզոնի մէջ ալ հայ կեանքին համար նշանակութիւն ունեցաւ այս տարի իր բեղմնաւոր հանգամանքովը։

Ամսոյն սկիզբները ոստիկանական պաշտօնեաներ գտնացին հաստատուեցան քաղաքէն մէկ ու կէս ժամ հեռաւորութիւն ունեցող Զէֆանոս կոչուած գիւղը, սկսան բռնութիւն ի գործ դնել պահանջելով որ Ռուսաստանէն նաւակով վերադարձած զէֆանսցին իրենց յանձնեն։ Գիւղացիք իզուր կ՚աշխատեն համոզել թէ իրենք տեղեկութիւն չունին։ Օգուտ չըներ։ Վերջապէս բաւական ծեծելէ վերջ՝ կը տեսնեն թէ բան մը դուրս չգար այս ընթացքէն, կ՚առնեն իրենց հետ քաղաք կը տանեն մխթար Արթին, Պողոս Կարագուլագեան, Յովսէփ և Մինաս Յովակեան, շանացի Գրիգոր և կը բանտարկեն։ Խեղճ գիւղացիք կը տեսնեն որ այս բանտարկութեան վերջը չպիտի գայ, կաշառք տալով կ՚ազատուին բանտէն։

Ասոնց բանտարկութենէն յետոյ՝ ոստիկանական պաշտօնեաներ կ՚երթան 4—5 ժամ հեռաւորութիւն ունեցող Ճօշարա և Կիւշանա գիւղերը և կը պահանջեն որ ցոյց տան տեղը այն բիզէցի Թուրք նաւապետին, որ նաւակով հայ կը փախցնէ Պաթում և իբր թէ այդ գիւղերը պահուած է եղեր։ Կը ծեծեն և կ՚սպառնան, սակայն արդիւնք մը դուրս չգար։ Այն ատեն Ճօշարացի և Կիւշանացի մխթարները և գիւղական խորհրդի անդամները իրենց հետ առնելով՝ քաղաք կը բերեն և կը բանտարկեն։ Նոյն ատեն կը փնտռեն շանացի քահանայ Արիստակէս Թորլաքեանը՝ բանտարկելու համար, սակայն նա տեղ մը հիւանդ պառկած ըլլալուն՝ ձեռք չանցնիր և կ՚ազատի այս բանտարկութենէն (արդէն երկու տարուան մէջ երկու անգամ բանտարկեցին յիշեալը՝ առիթներէ օգուտ քաղելով)։ Կառավարութիւնը տեսնելով որ այս ձերբակալութիւնն ալ արդիւնք մը չտուաւ, կ՚արձակէ վերոյիշեալները՝ խստիւ պատուիրելով որ ասկէ ետքը եթէ իրենց գեղերէն մէկը փախչի Ռուսաստան և կամ հոնկէ վերադառնայ, անմիջապէս լուր տան կառավարութեան։

Ասոնցմէ յետոյ կարգը կուգայ Զիզկսա գիւղին, ուր իբր թէ Ռուսաստանէն վերադարձած գիւղացի մը կայ եղեր. հոն կերթան ոստիկանութեան պաշտօնեաներ. երբ կը տեսնեն թէ իրենց սպառնալիքները, բռնութիւնները օգուտ չեն ըներ, կառնեն կը բերեն հայ մխթարը, գիւղական խորհրդի անդամները, խնդրոյ առարկայ եղող գիւղացիին հայրը և թուրք մխթարը, հոս կը սպառնան անոնց և ճնշումի իգործ կը դնեն, որպէսզի ստորագրեն պատրաստած գրութիւն մը։ Այդ գրութեամբ կ՚ուզէին հաստատել թէ Տրապիզոնէն առաջնակարգ հայ դերձակ մը Յովհաննէս Փաչաճեան պահած է այդ փախստական հայ գիւղացին։ Գիւղացիք, հակառակ եղած ճնշումին, չեն ստորագրեր այդ խաբէական վաւերաթուղթը և հետևաբար կը բանտարկուին։ Քանի մը օր բանտը մնալէ յետոյ, երբ կը համոզուին թէ առանց կաշառքի չպիտի կրնան ազատիլ այս վիճակէն, կը վճարեն պահանջած գումարը և կերթան իրենց տները։

Ամսոյս 13/26-ին գիշերը խումբ մը հայեր, անգործութենէ և այլ պայմաններէ մղուած, Պաթում պիտի մեկնէին Թուրքի մը նաւակով. կառավարութիւնը լուր կ՚առնէ, և նոյն գիշերը տեղնուտեղը կը ձերբակալէ 25—30 հայեր, մեծ մասամբ Պայպուրթի գիւղերէն։ Տրապիզոնի գիւղերէ եղողները կը փախչին, երկրին ծանօթ ըլլալուն պատճառաւ։ Հետևեալ օրը ասոնք բոլորն ալ կ՚ազատուին, ըստ ոմանց՝ իրենց գիւղերը, ըստ ոմանց՝ Կիւմիւշխանէ քաղաքը, որ ասկէ 3 օր հեռի է։

Մայիս ամիսը այնքան կարևորութիւն մը չպիտի ստանար քաղաքի համար եթէ Համիդեան վարչութիւնը իր մանկղեան մէկ խոշոր բարբարոսութիւնն ալ ի գործ չդնէր հոս... Ամսոյս 11/24-ին, հայոց Համբարձման տօնին գիշերը, կէս գիշերէն 2 ժամ ետքը, քաղաքին ամենէն կարևոր հրապարակի վրայ, զօրանոցին առջևը, կախաղան բարձրացուցին 24 տարու Համակրելի հայ երիտասարդ մը, Համբարձում Խրտրշեան, որ երկու տարի առաջ իբր յեղափոխական մահուան դատապարտուած էր մարտական խումբ մը կազմակերպելուն և սրիկայ մը սպաննած ըլլալուն համար։ Զմոռանանք ըսելու որ նոյնիսկ տաճկական պատժական օրինագրքին յօդուածները նման յանցանքներուն համար երբէք այդքան ծանր, բարբարոսական պատիժ մը չեն տրամադրեր։ Սակայն ծայրայեղ հայատեաց և փառամոլ ընդհանուր դատախազ՝ Էօմէր Լութֆի պէյ՝ ամեն միջոց ի գործ դրաւ այդ պատիժը տնօրինելու համար, և յաջողեցաւ։ Ինչո՞ւ չյաջողիր. արդեօք Համիդը պիտի խղճար հայ տղային և չպիտի ուզէր ատանկ անիրաւ իրատե մը հանելու։ Չորս ժամ կախաղանին վրայ կը թողուն արդարութեան համար կուլող հայ երիտասարդին անշնչացած դիակը և յետոյ կը ձգեն բեռի

սայլի մը մէջ և կը տանեն կը թաղեն հայ տէրտէրի ուղեկցութեամբ, զոր առջի օրուընէ ձեռք անցուցած էին։ Հակառակ օրէնքին՝ դիակը չեն յանձներ իր ծը-նողքին։ Կախաղանի վրայ իսկ, համակրելի երիտասարդը „կեցցէ յեղափոխութիւնը“ կը գոչէ և երբ կը շա-րունակէ այս մտօք խօսել, սև հրամանը կը տրուի և անմիջապէս կը վերջանայ բազմատանջ կեանքը։

Հայ տարրին վրայ շատ խորունկ տպաւորութիւն կը թողու այս խժդժութիւնը։ Ցաճկաց մէջ ալ շատեր կը գտնուին, որ չեն ախորժիր եղածէն։ Ցարաբախտա-բար, յոյներուն մէջ շատեր կերևան, որ չեն բողոքեր այս օրինակ բարբարոսութեան դէմ և նոյն իսկ ա-ռիթէն կ՚օգտուին՝ ալ աւելի մօտենալու ստոր կառա-վարութեան...

Կառավարութիւնը քանի մ՚ օրէն իվեր լուիկ հսկողու-թիւն մը կը կատարէ և ասկէ վեց օր առաջ ալ Պիթ-պազարի կոչուած շուկային մէջ զէնք ծախող թուրքի խանութները խուզարկեց և բաւական ատրճանակներ ժողովեց։ Ոմանք կանուխէն լուր առնելով՝ հրացաններ և մեծ քանակութեամբ ատրճանակներ պահած էին։ Զը հասկցուիր թէ Համիդի նենգամտութիւնը ի՞նչ նոր խաղ պիտի խաղայ անտէր, անպաշտպան հայերու գլխին, տարը մը, որ եթէ հանգիստ թողուի, յառաջդիմու-թեան բարգաւաճման առաջնորդ մը պիտի ըլլայ նոյն իսկ թուրք ժողովրդին։ Եւ ասմեր՝ բոլոր եւրոպացի-ներուս խորին համոզմունքն է, ինչպէս և անոնց, որոնք քիչ շատ կը ճանչնան փոքր-Ասիան։

ՀԱԼԷՊ, 31 մայիս

Զէյթունի զօրանոցի մէջ գտնուող թիւրք զօրքե-րու մէջ համաճարակ հիւանդութիւն կը տիրէ. զօրքի մեծ մասը Մարաշ փոխադրուած է և մնացած մասը զօրանոցէն դուրս՝ վրաններու տակ կը պահեն։ Այս դէպքը սարսափի մէջ կը պահէ տեղային և շրջակայ-քի կառավարութիւնները, որ սկսեր են Զէյթունի աչ-քի զարնող կարևոր անձնաւորութիւնները Զէյթունէն հեռացնել զանազան պատրուակներով և բանտարկել հոս և մի մասն ալ Մարաշ։ Բոլոր շրջականներու մէջ խուզարկութիւններ և ձերբակալութիւններ անպակաս են, և ձերբակալուածները, շատ քիչ բացառութեամբ, կը բերուին այստեղ։

Վ Ա Ն, 6 յունիս

Մեր վիճակը առայժմ խաղաղ է։ Առհասարակ մեծ և ցնցող դէպքեր տեղի չեն ունենար, բայց տուր-քերի և այլ տեսակ խստութիւնները կը շարունակուին։

Էրզրումի դէպքերը այստեղի թուրքերու վրայ դրժ-բախտաբար չանդրադարձան, ասոնք ոչ մի շարժում ցոյց չը տուին մինչև այժմ։

Հացի գինը սկսած է իջնել, ցանքերը լաւ կ՚երևին։ Ցեսնենք գիւղացին այս տարի կուշտ հաց պիտի ո՞ւտէ։

ՄՈՒՇ, 21 ապրիլ

Կարնոյ մէջ տեղի ունեցած ժողովրդային ցոյցերը հոս ալ ազդու տպաւորութիւն թողին։ Տարաբախտա-բար մանրամասնութիւններ կը պակսին. կառավարու-թիւնը միջոցներ ձեռք առած է, որ լուրը չը տարածուի։

Մեր կողմի համար մխիթարական բան մը չունինք։ Մեր անհուն ցաւերի մասին կրկնութիւնները՝ գրեթէ սրտամաշ են եղած։ Ցնաքանդ հարկահաւաքութիւնը կը շարունակուի, ժողովուրդը իր շարժական հարստու-թիւնէն զրկուելէ վերջ՝ հիմայ ալ կը զրկուի հողերէն։ Գունդագունդ կը գաղթեն տնով տեղով. այլևս դիմա-նալ անկարելի է. ապրելու միջոց չկայ։ Դիմում, բո-ղոք, գանգատ նշանակութիւն ամենևին չունին. անո-ղոք բռնութիւնը իր արհաւիրքն ու քայքայիչ դերը կը շարունակէ։

ՏՐԱՊԻԶՈՆ, 8 յունիս

Ամսոյս 10/23-ին Էրզրումէն հասան Պոլսէն խրկը-ուած քննիչները, պետական խորհրդի (շուրայի դէվլէ-թի) անդամ Մուսթաֆա պէյը և Մուշի նախկին կա-ռավարիչ Հիւսնի պէյը, և նոյն օրն իսկ նաև նստելով՝ ճամբայ ելան Պոլիս իրենց քննութեան համարը տալու Համիտական Արդարադատ վարչութեան։ Երբ ասոնք Էրզրում հասնելով քննութեան ձեռնարկեցին, իրենց կայան ընտրեցին զինուորական վարչութեան պաշտօնա-տունը և սկսան հոն կանչել ժողովրդէն այլ և այլ ան-հատներ։ Ժողովուրդը բողոքեց այս ընթացքին դէմ և պահանջեց որ քաղաքապետութեան պաշտօնարանը կատարի քննութիւնը և սպառնացան, որ եթէ այս առթիւ մէկը ձերբակալուի, անմիջապէս անգլիական դրօշ պիտի պարզեն, վստահ լինելով որ „Ինկիլիզը“ իսլամները աւելի կը պաշտպանէ, քան թէ Համիդը։ Քննիչները եղբայրական համակերպութեամբ տեղի տուին այս պահանջներուն։

Եթէ ուրիշ նահանգներ չհետևին Էրզրումի և Գաս-թէմունիի օրինակին, համիդական բէժիմը շուտ դուրս կ՚ելլէ այս կնճռոտութեան մէջէն իր անսահման ճկու-նութեան շնորհիւ։

Այժմ Էրզրումի մէջ թուրքերը շատ լաւ կը վե-րաբերուին հայերուն, կը խոստովանին որ հայ տարրը թուրք տարրէն շատ կանուխ զգացած է ժողովրդին վրայ ճնշող բեռը. և ազատ համարձակ հակակառա-վարական նիւթերու վրայ կը խօսակցին, առանց քաշ-ուելու լրտեսներէ և ոստիկաններէ։ Արդե՞օք երկար պի-տի տևէ այս։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ

ՆԱՄԱԿՆԵՐ ԹԻՖԼԻՍԻՑ

I

Թիֆլիս, 22 յունիսի

Սկսենք թնդանօթ-գնդացիրներից, որ՝ թէ շրջակայ բլուրների և թէ Երևանեան հրապարակի ու Գօլո-վինսկի պրոսպէկտի վրայ պահանջած բոպէին կրակ ու մահ պէտք է ժայթքեն իրենց սև բերաններից։ Ասում ենք „պահանջած բոպէին“... որովհետև Ցիմնգիէնները շնչերնին քաշած՝ բոպէ առ բոպէ սպասում են ցոյցե-րի՝ յեղափոխականների կողմից։

Պատերազմական դրութիւնը Թիֆլիսում՝ այսօր լիա-կատար է։ Զօրքերը ոտքի է կանգնեցրած. զինուորները ստուար խմբերով „դիրք“ են մտել քաղաքի զանազան

կէտերում։ Խուզարկութիւնները կրկնապատկուած են... Եւ այս ամենը՝ ի պատասխան այն ընդհանուր գործադուլի, որ այսօր հրատարակուեց Թիֆլիսում...

Գիտէք, անշուշտ, Մինգրէլեան գնդի այն 27 զինուորների մասին, որոնք դատի են ենթարկուած, որպէս „կրամոլնիկներ“։ Նրանք անցեալ մարտին „փորձ են արել՝ պետութեան հիմունքները սասանեցնելու“.—ինչպէս սիրում են ասել մեր բիւրօկրատները։ Մուկդէնի և Ցուսիմայի „չարիքների“ բարերար հետևանքները հետզհետէ արտայայտւում են ռուսական՝ արդէն կազմաուծուել սկսած բանակներում։

Շմիդտները մեռան, գուցէ և մոռացուել են այսօր, առժամանակ. բայց նրանց ապստամբական, ոգևորող ոգին շարունակ սաւառնում է „Մայր-Ռուսիայի“ լայնածաւալ տարածութեան վրայ, և մտորմունքների բոպէներին՝ ռուս „սօլդատիկը“ ուշադրութեամբ ականջ է դնում նրա թևերի թափին... Որքան էլ՝ անյուսալի լինի յեղափոխութեան համար զօրքի դաշնակցութիւնը, որքա՛ն էլ՝ ներկայումս քիչ սպասելիքներ ունենանք Բօգդանովիչների դաստիարակած սերնդից,—այնուամենայնիւ, ռուս զինուորն այսօր տալիս է հասունութեան ապացոյցներ, որոնք աւելի ու աւելի ոյժ են ներշնչում ազատամարտը մղողներին...

Ահա Մինգրէլեան գնդի 27 զինուորները. համոզմունքից, կամքի անյողդողդութիւնից ու արիութիւնից խօսող ի՜նչ ժպիտներ էին խաղում այսօր նրանց դէմքերին, երբ նրանք կօշակներով շրջապատուած, տարուում էին դատարան՝ այնտեղ իրենց „լինել-չլինելու“ վճիռը ստանալու։ Ազատագրական շարժումը՝ հրով ու սրով յետ կասեցնել ուզող բիւրօկրատիան—ատամներ էր կրճտեցնում այդ ըմբոստ զինուորների վրայ, որ յանդգնել են միտինգներ սարքել, ճառեր լսել, Մարսեյեզ երգել. մանաւանդ՝ Մարսեյե՛զը...

Մա՜հ ըմբոստներին... Եւ սանձարձակ կամայականութեան, անպատկառութեան, արիւնարբութեան ներկայացուցիչ բիւրօկրատիան երբէք չէր վարանի՝ մի հրամայական Գողգոթա սարքելու և 27 խաչ տնկելու նորա գագաթին՝ 27 դատապարտուած զինուորների համար... Բայց ժողովուրդը հնչեցրեց մի համարձակ, ուժգին ձայն՝ „ազա՜տ արձակել բոլորին“... Ժամանակները փոխուել են—Դաշկովներն անգամ այժմ, կամայակամայ, պէտք է ականջ դնեն ժողովրդի ձայնին, որ օրէցօր դառնում է աւելի ու աւելի հզօր։ Եւ ի՞նչպէս ականջ չը դնել, երբ այսօր ամբողջ քաղաքն է, որ ընդհանուր բողոք է արձակում, ընդհանուր գործադուլ յայտարարելով։

Ընդհանո՜ւր գործադուլ։ Փակ են բոլոր խանութները ու մասնաւոր զանազան հիմնարկութիւնները։ Տրամվայը չէ գործում. փողոցներում չը կայ ո՛չ մի կառք։ Անցուդարձ անողները քիչ են։ Աշխոյժ, անհանգիստ Թիֆլիսը կծկուել լռել է։

Այսօր դատում են 27 զինուորներին։ Բոլորն էլ մտիկ ազգաբնակութեան սրտին, սրա բուռն սէրն են վայելում։ Եւ որպէս թարգման ժողովրդի այդ խորը զգացմունքի, քաղաքիս յեղափոխական կազմակերպութիւնները—Դաշնակցութիւնը, Սոցիալ-Դեմոկրատները առանձին թռուցիկներով ազդարարեցին ընդհանրութեանը, որ „իրենք երբէք թոյլ չեն տայ՝ այդ հերոս զինուորների թանկագին կեանքին դիպչելու“։

... Արդէն մթնել է. փողոցներում հազարաւոր լապտերներից և ոչ մէկը չի վառուում։ Գործադուլն այդպիսով յատուկ խորհրդաւորութիւն է ստացել։ Զինուորական պատրուլները շարունակում են չափչփել փողոցները։ Ամենքն էլ սպասում են դատարանի վճռին...

ԴԻՊՔԵՐԸ

Երեւան, յունիս 9

Այսօր առաւօտեան ժամի 11-ին վերսկսուեց հայ-թուրքական ընդհարումը սովորական տեղից—Մէյդանից։ Ինչպէս միշտ՝ այս անգամ էլ սկսողները թուրքերն էին, թէև օրեր առաջ յամառ լուրեր էին տարածում, թէ նախայարձակ են լինելու հայերը։ Առաւօտից արդէն շարժում էր նկատուում թուրքերի մէջ. նրանց ղանբէզարները մտրակները ձեռքներին շրջում էին հայ խանութների շարքերը և ամբարտաւան կերպով դուրս կանչում թուրքերին՝ հրամայելով բան չը գնել հայերից։ Այս անգամ համեմատաբար աւելի զօրեղ հրացանաձգութիւն եղաւ, իսկ զոհերի թիւը բարեբախտաբար աւելի քիչ։ Հայերից սպանուած են 5 հոգի, վիրաւորուած 5, իսկ թուրքերից 7 հոգի, վիրաւորների թիւն անյայտ։ Հրացանաձգութիւնը տևեց մէկ ժամի չափ։

Երեւան, յունիս 10

Այսօր առաւօտեան, լուսաբացին, կոնդի հայ-թուրքական մասում միանգամից սկսեց մի այնպիսի ուժեղ հրացանաձգութիւն, որ յիշեցնում էր անցեալ տարուայ մայիսի 24-ը։ Դրա թոյլ արձագանքներ եղան Շհար և Դամբրուլաղ թաղերում, որի ժամանակ ստրաժնիկները կարողացել են սպանել երկու թուրք հրացանաձիգների և ձերբակալել մի քանիսին, խլելով նրանցից հրացանները։ Բազարը ամբողջապէս փակ է. յարաբերութիւնները կտրուած են և լարուած։

Երեւան, յունիս 12

Այսօր առաւօտ Զանգուի միւս կողմի թուրքի այգիներում գտնուել են երկու թուրքեր, մէկը սպանուած, միւսը վիրաւոր։ Ցանցանքն, ինչ խօսք, վերագրում են հայերին։ Մեղաւորը չէ գտնուած. ենթադրւում է, որ նրանք երկու օր առաջ խփուածներից կարող են լինել։ Այս երկու օրը առանձին դէպքեր տեղի չունեցան. լուռ է թէ քաղաքում և թէ շրջակայքում։ Անցեալ օրը թուրքերն ուզել էին գողանալ մի հայ երիտասարդի, բայց նա մի կերպ ազատուել էր դէմքին վէրք ստանալով։ Դա եղել էր Նահանգապետի տան մօտ... Շուկայում մեռելութիւն է տիրում. հայերը հատ-հատ բանում են խանութները մի քանի ժամով և կրկին կողպում. թուրքի ոչ մի խանութ չէ բացուում. նրանք դեռ լուռ փակուել են Դամբրուլաղ թաղում և սպառնալիքներ են ուղարկում թէ „հայեր, կը տեսնէք, մեր մի սպանուածի տեղ ձեզնից հարիւրն է գնալու“։ Քաղաքի դրութիւնն անորոշ է, տագնապալից, անհանգիստ...

Իգդիր, յունիս 6

Մինչև այժմ սպանուած և կորած են մի քանի հայ, մի քանի թուրք։ Թալանուած է մէկ հայկական գիւղ։ Ցուգանքի են ենթարկուած չորս հայկական և հինգ

թուրքական գիւղ։ Էկզէկուցիա է նշանակուած մէկ հայկական և մէկ թուրքական գիւղերում։ Ալաշարաֆբէգ Համշագինովը իշխանութեան առաջ երաշխաւոր դարձաւ, որ քրդերը չեն յարձակուի։ Միամտութիւն է հաւատալ այդ աւազակապետի խօսքերին։

Երեւան, յունիս 12

Կեանքը դեռ չէ մտել իր նորմալ ընթացքի մէջ։ Հայ ու թուրք չափազանց կասկածանքով են նայում միմեանց։ Իշխանութեան կողմից ոչ մի դրական քայլ չէ արուած անցեալ արիւնհեղութեան պարագլուխ ոճրագործներին պատժելու համար։ Միամիտ ժողովուրդը դեռ սպասում է արդարադատութեան, որ մեզանում վաղուց է մեռած և պրովոկացիայի ու արիւնոտ դաւերի տակ թաղուած։

Երեւան, յունիս 12

Գեներալ-նահանգապետ Խացկեվիչի հեռագիրը ուղղած Կովկասեան փոխարքային. „Անձամբ շրջագայելով մօտ օրերս տեղի ունեցած անկարգութիւնների վայրերը, իրերի դրութիւնը Սուրմալուի գաւառում այժմ բարեյաջող եմ համարում։ Յունիսի 3-ից սկսած մինչև այժմ գաւառում սպանութեան դէպքեր տեղի չեն ունեցել։ Երկու ազգութիւնների ներկայացուցիչներն էլ խաղաղարար մասնաժողովի առաջնորդութեամբ, որ գործում էր անկեղծ և անաչառ, ղղջալով փոխադարձ յանցաւորութեան համար, հաշտութիւն կնքեցին, պարտաւորուելով ստորագրութեամբ՝ ընդմիշտ վերջացնելու կռիւները։ Ստուգելով գտայ, որ յունիսի 2-ին և 3-ին եղած մարդկային զոհերի թիւը հետեւեալն է. սպանուած են 3 հայ և 6 մուսուլման. վիրաւորուած են 2 հայ և 3 մուսուլման։ Կօզակների հետ ընդհարուելու ժամանակ սպանուել են ոչ թէ 8 մուսուլման, այլ մէկ, մէկ էլ վիրաւորուած և 14 հոգի էլ կալանաւորուած, որոնցից 4-ը վիրաւոր“.

ՇՈՒՇՈՒ ՇՐՋԱՆՈՒՄ

Շուշի, յունիս 9

Մեր շրջանում վերջերս տեղի ունեցած դէպքերը ստիպեցին յեղափոխական խմբերին դուրս գալ սպասողական վիճակից, քանի որ այդպէս էին պահանջում տեղական հանգամանքները։ Կազմակերպութիւնը ցանկութիւն ունէր չը պատասխանել անհատական սպանութիւններին, բայց տարաբախտաբար այս կողմերի սպանութիւնները կրում են ոչ թէ անհատական—պատահական բնաւորութիւն, այլ համարեա մասսայական և դիտաւորեալ։ Խաչէնի դէպքերից յետոյ Շուշու շրջանում հայերից սպանուած և գերուած են մօտ հարիւր մարդ. իսկ գերիներն էլ մինչ այժմ յետ չեն եկել և կասկած չը կայ, որ սպանուած լինեն։

Կուրամիտ թուրքերը, մանաւանդ նրանց ղեկավարները, չափազանց լրբացել են՝ համոզուած, որ կառավարութիւնը իրենց կողմն է և հետեւաբար հայերը վախենում են։ Կազմակերպութիւնը ստիպուած էր, հակառակ իր բոլոր խաղաղասիրական ձգտումներին և զիջումներին—պատասխանել նոյնութեամբ թիւրքական յարձակումներին, խուսափելով մասսայական ընդհարումներից։ Վերջի 4—5 օրւայ ընթացքում մեր շրջակայքում թուրքերից սպանուած են 11—12 հոգի։ Այդ առիթ է տուել մօտակայ քոչւորներին, որոնք ցրուած էին լեռներում և բռնել էին բոլոր ճանապարհները, հաւաքել իրենց վրանները, գնալ քիչ աւելի հեռուն և աւելի համախմբուած լինել ու այդ կերպով լեռների որոշ մասը ազատ թողնել, որը հայերի համար շատ ձեռնտու է։

Կառավարութիւնը վերջի սպանութիւնների և դէպքերի վերաբերմամբ ակտիվ ոչ մի միջոցի չէ դիմել։ Այդ է պատճառներից մէկը, որ գուցէ կուռղ ոյժերը ստիպուած լինին քոչին մի թեթև ձեռք տալ թրքական սահմաններում՝ որով կարելի կը լինի թէ նրանց լեռ բարձրանալուն խոչընդոտ հանդիսանալ և թէ սպանուածների փոխարէն հատուցում ստանալ։ Ցաւ է ասել, որ աւազակաբարոյ սրիկաների հետ մեծահոգութիւնը ոչ մի արդիւնք չի տալիս։ Ընդհակառակը նրանք աւելի լրբանում են։ Հետաքրքրական է և այն, որ նրանց մէջ նկատւում է մի ինչ որ ընդհանուր տակտիկա, նախամտածուած և ծրագրուած գործունէութիւն։

Քաղաքի թուրքերն էլ իրենց չափազանց համարձակ են պահում և առիթի սպասում։ Նրանք ամենայն ազատութեամբ զինուած ման են գալիս թէ ճանապարհների վրայ և թէ քաղաքի մէջ՝ իրենց մասում և մեր սահմաններում, իսկ հայը իհարկէ զրկուած է այդ արտօնութիւնից։ Կառավարական պրովոկատորներ շատ կան քաղաքի մէջ։ Արտագաղթումը հայերին մեծ վնաս հասցրեց։

Միլիցիայի հարցը, ճիշտ է, հերթական հարց է, բայց ներկայ պայմաններում դժուար իրագործելի։ Ժողովուրդը ուժասպառ է եղել, հարեւան թշնամին՝ ոխակալ և յիմար, իսկ կառավարութիւնը՝ պրովոկատոր։ Գօլոշչապովը առաջնանը չէ. նրա իրաւունքները սահմանափակուած են երևում, իսկ ինքը աչառու։ Նա գալուց իվեր ոչինչ չէ արել, շարունակ հայերին է մեղադրում, միևնոյն ժամանակ հանգստացնում ասելով՝ „Դուք ոչինչի մի ձեռնարկէք, ես ամեն բան կարգի կը բերեմ“։ Թուրքերի՝ Ղարաղշլաղի վրայ յարձակումից յետոյ՝ միայն երրորդ օրը կօզակներ ուղարկեց, որոնք բաւականացան չորս խեղճ ու կրակ թուրքեր ձերբակալելով, ուրիշ ոչինչ։ Թուրքերը չեն կարողացել գիւղին առանձին վնաս հասցնել, միայն 14 գերուածներին, ինչպէս երևում է, կոտորել են։ Օր չէ անցնում, որ շրջակայքում սպանութիւններ չը լինին։

ԳՈՐԾԱԴՈՒԼ

(Թռուցիկ)

Ընկերներ,

Այս մէկ տարւայ ընթացքում Թիֆլիսի բանւորութիւնը մեծ առաջադիմութիւն է արել իր դասակարգային գիտակցութեան տեսակէտից, մասնակցելով Ռուսաստանի մեծ Յեղափոխութեան։

Բանւորութիւնը մեզանում՝ իր յաճախակի յեղափոխական ըմբոստութիւններով, արիութեամբ տարած իր գործադուլներով կարճ ժամանակամիջոցում զգալ է տուել բուրժուազիային ու նրա ներկայացուցիչ՝ ռուս կառավարութեանը պրոլետարեատի յեղափոխական ոյժը, և՝ ստիպել նրանց խոշոր զիջումներ անել, կրճատել բանւորական աշխատանքի շահագործումը։ Բանւորութիւնը կրթուել է յեղափոխական կռւի մէջ և առաջադիմել։

Բայց երկար ժամանակ այս վեհ մարտիկների շարքերից դուրս ենք եղել մենք՝ Թիֆլիսի բանուորութեան մի մեծ ճիւղը՝ ամբողջ քաղաքը կերակրող հացթուխ-բանուորներս։ Զարմանալի է... Մենք գիտենք, որ ամբողջ քաղաքը մեծ ու փոքր, ամենահարուստն ու ամենաաղքատը՝ մեր աշխատանքովն են կշտանում։ Մենք զգում ենք մեր աշխատանքի վեհութիւնը, կարևորութիւնը. բայց այնուամենայնիւ երկար-շատ երկար չենք զգացել մի այլ անհրաժեշտութիւն՝ նաճելու մարդավայել կեանքի պայմաններ։ Մենք կերակրել ենք հարիւր հազարաւոր մարդկանց, բայց ինքներս քաղցած ենք ապրել, մենք գիշեր-ցերեկ քուն չենք ունեցել, աշխատել ենք անասունից վատ, պրուել ենք կրակի առաջ ու խեղդուել այիւրի փոշու մէջ, մենք մեր ամբողջ էութեամբ տարուել ենք մեր „տէրերի“ շահերով, ապրել ենք նրանց համար և այդպիսի դրութիւնը համարել ենք կարծես թէ բնական։ Մենք բողոք անգամ չենք յայտնել։

Բայց ի՞նչն է եղել մեր այս անլուր տանջանքների պատճառը, ինչո՞ւ մենք թոյլ ենք տուել այսպէս տարդի կերպով շահագործել մեզ։ Միակ և միակ պատճառը եղել է իհարկէ այն, որ մենք կազմակերպուած չենք եղել, մեզնից չենք ներկայացրել ոչ մի հաւաքական ոյժ, որի առջև խոնարհուէին մեր կեղեքիչները, որը տանէր մեզ էլ տեղաւորելու բանուորութեան հոյակապ բանակի շարքերում։ Մենք կազմակերպուած չենք եղել ոչ տնտեսական և ոչ էլ քաղաքական հողի վրայ։

Բայց այժմ կատարուեց այն, ինչ որ անխուսափելիօրէն պէտք է կատարուէր։ Մենք այժմ երևան ենք գալիս իբրև կազմակերպուած գիտակից բանուորներ, իբրև աշխատաւորների բանակի մի մարտնչող խմբակ։ Համախմբուած Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կարմիր դրօշակի տակ՝ մենք նետուում ենք յեղափոխութեան մարտադաշտը, ուր այսուր թէ վաղը վերջնական, ճակատամարտից յետոյ՝ վճռուելու է բռնակալութեան բախտը։

Ընկերներ, միայն մեր առօրեայ տնտեսական շահերը չէ, որ ժողովել է մեզ քաղաքական կուսակցութեան շուրջը, այլ այն մեծ պատմական դերը, որ ստանձնել է բանուորութիւնը ներկայ քաղաքական ժամանակում։ Այս նուիրական օրուանից մենք երևան ենք գալիս ապացուցելու, որ արդէն արթնացել է մեր մէջ շահագործուածի, կեղեքուածի ըմբոստ ոգին, մենք գալիս ենք խտացնելու յեղափոխական պրոլետարի շարքերը, մենք գինուոր-քաղաքացիներ ենք այն մեծ բանակի, որ ազատելու է աշխատաւոր դասակարգը՝ քաղաքական տնտեսական գերութիւնից։

Ընկերներ, առաջին քայլը որ մենք անում ենք այդ ճանապարհի վրայ, դա այսօրուայ տնտեսական գործադուլն է, որով մենք ձգտում ենք բարւոքելու մեր դառն աշխատանքի պայմանները։ Չը խնայենք ոչ մի միջոց՝ յաղթութեամբ պսակելու մեր անդրանիկ դասակարգային մենամարտը..

Կեցցէ՝ հացթուխ-բանուորների գործադուլը։
Կեցցէ՝ Ռուսաստանի Յեղափոխութիւնը։
Կեցցէ՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը։
Կեցցէ՝ սոցիալիզմը։

Հ. Յ. Դ.
Թիֆլիսի գործադուլային քիւրո

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

(Երեսունիններորդ նամակ)

Պետերբուրգ, յուլիսի 4

Կայ մի բառ, փոքրիկ, նոյնիսկ մեղմահնչիւն, որ տասը տարուց ի վեր, 95-ից սկսած, կպել է հայի օձիքին, չի պոկուում նրանից և հետևում է ինչպէս ուրուական, ինչպէս մի անբաժան ստուեր։

Կոտորած բառն է այդ, ստորացուցիչ, վիրաւորական, լաց ու կնճիռ առաջացնող մի խօսք, որ կազմում է հայկական տասնամեայ պատմութեան պատանդանը, նրա քաղաքական փոթորիկների անարգ „պսակը“, մի կատարեալ բացասումն մեր ինքնասիրութեան, մեր ռազմական դիմադրող բնազդների...

Ու շատ յաճախ, մասնաւոր զրոյցների ժամանակ, թէ ժողովներում, գրքերի մէջ թէ ամբիոնի վրայ, այդ անիծուած բառը, արտասանուած որևէ առիթով, սլաքի նման ցցւում է իմ սրտի մէջ, և ես՝ ամօթխած ու ճնշուած, սպասում եմ թէ ահա „կոտորածին“ կը յաջորդի նրա անբաժան ընկերը՝ „հայը“, զուգաւորուած բոլոր սրտերի և բոլոր ուղեղների մէջ, որպէս քաղաքական յատկանիշ մեր արդի կացութեան, ինչպէս առօրեայ ածական այն ժողովրդի անուն, որ ամենից շատ տանջուեց, անրաւ զոհեր տուեց, բայց դեռ վերջնականապէս չէ ազատուած այն նախատինքից, որի դէմ ըմբոստանալը՝ մեր կեանքի խորհուրդը պիտի լինի, երազանքը՝ մեր ընթացիկ կռիւների...

Ու հազիւ մի տարի է միայն, որ շնորհիւ կովկասեան հայութեան ռազմական հովերի, շնորհիւ այն յեղափոխական թռիչքի, որով տարուեց Արարատի շուրջը ապրող հայկական հատուածը, մենք կարող եղանք մի փոքրիկ ճեղքուածք առաջ բերել այդ երկու զուգաւորուած, գրկախառնուած բառերի մէջ՝ որպէս զի „հայկական կոտորածը“ վերացնենք մէջ տեղից և փոխարինենք նրան նոր բառերով, խօսքերի նոր դասաւորութեամբ։ „Հայկական յարձակումն“, „հայ-թիւրքական ընդհարումներ“ — ահա նորագոյն ոճը, որ ցարաստեղծ եղեռնի սկզբում շատերին թւում էր հնարովի, ոմանց նոյնիսկ ծաղրական, բայց որը իր իրական բնոյթով կարողացաւ ուղի բաց անել և երևան գալ իբրև ճշտագոյն արտայայտութիւն իրերի դրութեան, իբրև հարազատ պատկեր քաղաքական մենամարտի...

Եւ երկու ժողովուրդների ընդհարման ողբալի պատկերի դիմաց, արեան և վշտի կսկծեցուցիչ օրերին, որքա՜ն քաջալերիչ, որքա՜ն խրախուսական է այն փաստը, որ արթնացող, ստրկութեան կեղտը լուացող հայ տարրը այլ ևս կոտորուող ոչխարահօտ չէ, այնքան ատելի անցած օրերին, և կամ անբան ու անբողոք մի քաղաքական նոխազ, այլ մարդկային մի համախմբումն, որ գիտէ սաստ տալ, ձեռք բարձրացնել, և որը՝ համակուած ինքնապաշտպանութեան մտքով՝ վճռել է ծառայել խաղաղութեանը ոչ թէ ստրկային լռութեամբ, և կամ արդարութեանը՝ վախկոտ համակերպութեամբ, այլ իրաւունքով, քաղաքական ետ-ով, մարտական իրաւունքների հաւասար հակադրութեամբ...

Դա խրատական մի դաս է, ոչ միայն սուլթանական եաթաղանին գլուխ ծռող թիւրքահայերի անցնող սերնդին, որ հաւատացնում էր, թէ „հայը միայն հպատակիլ կրնայ“, այլ նոյնիսկ սուլթանական պալատին, որ լրբօրէն համոզուած էր, թէ „գեաւուրը միայն կոտորուիլ կրնայ“, և որի առջև Անդրկովկասեան դէպքերը բաց են անում մի նոր տեսարան, մի անսպասելի հօրիզոն, իբրև անջրելի փաստ, թէ ա՛յն՝ ինչ կատարուեց Թիւրքաց Հայաստանում իբրև մասնակի քաջագործութիւն, իբրև յեղափոխական մարտիկների ան հա-

տակն հերոսութիւն, այժմ հայկական երկրի մի այլ մասում՝ կատարւում է իբրև մասսայական քաջագործութիւն, իբրև յեղափոխող ժողովրդի հաւաքական հերոսութիւն, և որը, ուրեմն, կարող է դիտել թշնամուն հպարտ ճակատով, և պատասխանել նրան՝ զէնքին՝ զէնքով, բարևին՝ բարևով, արհամարանքին՝ արհամարանքով.

Քաղաքական այդ բարձրացման դիմաց՝ ներելի չէ այլ ևս տեսնել հային, ուր և լինի այդ, մորթուած ինչպէս ոչխար, հայրենուն՝ անպատուած, որպէս ստրկուհի, հայկական գիւղն ու շէնը՝ աւերուած, ինչպէս անասունների բոյն։ Բաւական է, որքան լսեցինք, կարդացինք և տեսանք՝ հայ անունը կրողին ոտի տակ ընկած, բռնաբարուած, արտասուքը աչքերին, աղերսանքը շրթունքների վրայ։ „Ամբողջ գիւղը կոտորեցին, կանանց բռնաբարեցին, երեխաներին և ծերերին սրի անցկացրին“—այդ ստերեօտիպ, ստորացուցիչ տողերը, որ սերունդներ սերունդների յետևից վարժուել են գրի առնել և հաղորդել առանց զզւանքի և ցասման, և որը հայ լրագրները՝ անխռով համբերութեամբ՝ սովոր են տպագրել իրենց լալկան էջերում,—պէտք է վերացնել, ջնջել և յետ մղել անզուսպ ատելութեամբ և բողոքի ուժգին շեշտով։ Յեղափոխական խմորումի այս նշանակալից օրերին՝ ամօթ և նախատինք այն մարդուն, այն կնոջ, այն հայանուն արարածին, որ պիտի բռնաբարի՝ առանց խեղդելու, աբրիւն պիտի տայ՝ առանց արեան, թալանի և աւերման պիտի մատնի՝ առանց կատաղութեան, հատուցման ու վրէժի։ Ամօթ և նախատինք այն հային, որ երկիւղ ունի, բայց զէնք չ՚ունի, որ ատելութիւն ունի, առանց ըմբոստացման, վրէժ՝ առանց հատուցման...

Կռիւ, դիմադրութիւն, հակահարուած ոչ միայն ճրն շողներին, լինի այդ Համիդ թէ Ցար, Գօլիցին թէ Զէքի, ոչ միայն բռնաւորների անարգ գործիքներին, լինի այդ քիւրդ, թիւրք, թաթար թէ քրիստոնեայ „սև հարիւրակ“, այլ և հարազատին, անզգայ հարևանին, ստրկաբարոյ համագիւղացուն, որ թոյլ է տալիս՝ ինչպէս անքան անասուն՝ գերել, մորթել իրեն, անպատուել իր ընտանիքը, թալանել իր գիւղը։ Կռիւ ոչ միայն բռնութեան, այլ և ստրկութեան։ Դիմադրութիւն ոչ միայն հալածող օտարականին, այլ և ոչխարօրէն հալածուող հարազատին։ Հարուած ոչ միայն ջանքեզարին, այլ և այն անճարներին, որոնք չունին մարդուն վայել սիրտ, ոգի, ձգտումն ու թռիչք...

Մի ամբողջ ցեղի, մարդկային մի ահագին հատուածի բարձրացումն ու մաքրագործումն է այս քաղաքական տանջալից կռիւը,—թափթփուկները պիտի ոչնչանան։ Եւ այն բոլորը, ինչ որ անկարող է շարժուել, ցնցուել և վեր բարձրանալ, պէտք է, բնականօրէն, տակն անի և անհետանայ, փոխանակ կպչելու, ինչպէս տզրուկ, օրգանիզմին և վարակելու նրան՝ անշարժութեան և ստրկութեան մահաբեր միկրոբներով... Հասարակական անհրաժեշտ մաքրագործումն է այդ, քաղաքական մի տեսակ ընտրականութիւն, որից չը պէտք է և չէ կարելի յուսահատուել...

Եւ եթէ քաղաքական-պատմական այս կրկնակի կերպարանափոխութեան համար դարձեալ զոհեր են հարկաւոր—դրա առաջը կանգ չը պէտք է առնել։ Երեք հարիւր հազար զոհ տուինք, ինչպէս ոչխարհօտ. մի քանի հարիւր գիւղեր՝ ինչպէս թալան. տասնեակ քաղաքաթաղեր՝ ինչպէս աւերակայր։ Դրա հարիւրերորդ մասը զոհաբերենք՝ իբրև մարտախումբ, իբրև յեղափոխական բանակ, իբրև ազատութեան ռազմիկ։ Դա լաւագոյն միջոցն է՝ թէ նախկին եղեռնի վրէժը լուծելու, թէ նորերը կանխելու համար։ Ստրկութեան կեղտը, որով պատած է հայի կաշին ու հոգին, արտասուքի կաթիլներով չի լուացուի, այլ մի հեղուկով, որի բեցեպտը գրուած է ազատութեան պատմագրքի էջերում, մեծագոյն բժիշկների ձեռքով...

Է. ԱԿՆՈՒՆԻ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

ԴՈՒՄԱՆ

Ի՞ՆՉ ԱՆԵԼ ԱՑՍՈՒՀԵՏԵՒ

Հրատարակում ենք ընկեր Արարատսկու ներկայ յօդուածը, գրուած „Դրօշակի“ համար, թէեւ նրա մէջ յայտնուած կարծիքներից մի քանիսը անձնական են։ Այս խնդիրը արժանի է բազմակողմանի ճնշուածքեան ու ձեռնհասաս անձանց լուսաբանութեան։

Աղմկած է մայրաքաղաքը, որտեղում են հռետորները... Ռուսական ազատագրական շարժումը, որը ընկճուել և ծածկուել էր գետնափոր նկուղի մէջ Վիտէ-Դուրնովոեան „սահմանադրական“ ռէժիմով, նորից դուրս նետուեց և լայն, ահաւոր ալիքով ողողեց ամբողջ երկիրը։ Կառավարութեան բոլոր ջանքերը—արեան հեղեղներով մարել հրդեհը, իդերև անցան։ Լցուեց համբերութեան բաժակը։ Ցառապանք, քէն, զայրոյթ, ատելութիւն, յուսախաբութիւն, արհամարանք—այս բոլորը խմբուած՝ միակամ և ներդաշնակ, ի մի կապակցուեց, բոլորեց ազատութեան խորանի շուրջը և անողորմ, անուղղելի հարուած հասցրեց բիւրօկրատիայի նենգ, խորամանկ յերիւրանքներին։

Ինչի՞ ասես, որ չը դիմեց նա, այդ խայտառակ ժառանգը բազմադարեան ստրկութեան, որպէսզի ժողովրդական ներկայացուցիչներից ստեղծի մի խղճուկ կատակերգութիւն։ Բայց անյաջող։ Ռուս նշանաւոր մարդկանց նուիրական տենչանքը թէև, ճիշտ է, քքքրուած և այլանդակուած—ի մի ձուլուեց քիչ թէ շատ կոնկրետ ձևերի մէջ։ Վաղուց ի վեր ցանկալի „Ռուսական պարլամենտը“ զործել սկսեց։ Հակառակ սպասածին՝ նա իրեն ցոյց տուեց յստակ ընդդիմադրական և իր գործունէութեան հէնց առաջին քայլերից նուաճեց ամբողջ քաղաքակիրթ աշխարհի համակրանքը։ Թող գլխաւոր տեղը նրա մէջ „կադետներին“ տրուի—չը պիտի մոռանալ, որ ծայրայեղ կուսակցութիւնները գիտակցաբար բոյկոտի ենթարկեցին դումայի ընտրութիւնները—թող „մեծամասնութեան“ ծրագիրն ու տակտիկը յետ մնայ յեղափոխականապէս լսուած և յեղափոխականօրէն մտածող Ռուսաստանի պահանջներից—այդ չէ ներկայումս կարևորը։ Էականը այն է, որ ժողովրդի ընտրեալները—դժբախտաբար նրանց չէ կարելի իսկական ներկայացուցիչներ համարել—դառն ճշմարտութիւն ասացին իշխանութեան ներկայացուցիչներին. ասացին ուղղակի, առանց բեվերանների, առանց երկդիմութեան, ի լուր ամենքի.—„Դուք Ռուսաստանի իսկական թշնամիներն էք, դուք չէք հասկանում և չէք էլ կարող հասկանալ նրա կարիքներն ու պահանջները, ապա ուրեմն հեռացէք ապօրէն կերպով գրաւած ձեր պաշտօնադիրքերից, հեռացէք՝ քանի դեռ ուշ չէ, մի՛ սպառէք ժողովրդի համբերութիւնը, որովհետև նրա ատելութիւնը աճում է ո՛չ թէ օրերով, այլ ժամերով և նրա ցասումը անսահման կը լինի“։

Իսկ իշխանութիւնը, արդեօք ըմբռնեց նա այդ օրհասական նախազգուշացման իմաստը, արդեօք մի կողմ քաշուեց, որպէսզի ճանապարհ տայ նրա՝ ոչ թէ կործա-

նիչ, այլ ստեղծագործող ուժերին, ձգտող դէպի Ռուսաստանի վերածնութիւնը։ Ո՛չ։ Յամառ, ինչպէս միշտ, իրերի իսկական դրութեան անհասկացողութեան մէջ, անամօթ, ինչպէս միշտ, մինչև ցինիզմ, լիտիրէն ինքնավստահ, անսկզբունք, զուրկ որևէ քաղաքական ըմբռնումից, զրկուած շատ ու քիչ լուրջ ինիցիատիվների ամենափոքր նշոյլից, նա առաջւայ նման յոյս ունի մնալ իր դիրքերում՝ սիւնների, բանտերի, ու խողխողման օգնութեամբ, աջակցութեամբ գեներալ Ղահանգապետների մի ամբողջ վոհմակի, որ անարգել շարունակում է իր բաշիբոզուկութիւնները „խստացրած զինուորական վիճակի“ հովանու ներքոյ...

Անմտութիւն չէ՞ միթէ այս։ Նրան ներկայացնում են ծրագրական ուղերձ, իսկ նա դրան ստերեօտիպ կերպով պատասխանում է՝ „Չեմ թոյլ տայ, ցիր-ցան կ'անեմ“։ Նրան դուռն են ցոյց տալիս և խնդրում պատուով հեռանալ, իսկ նա՝ առանց ամենափոքր շփոթմունքի անդամ, իբրև պաշտպան իր „դեկլարացիայի“, հանդէս է բերում պետական իմաստութեան այնպիսի անձարձակ և անփոյթ կտրիչներ, որպիսիք են Ստիշինսկին և Գուրկոն։ Նրան մեղադրում են մի շարք սպանութիւնների մէջ, իսկ նա դուրս է բերում դումայական ամբիոնը անհոգի, անսիրտ ՍՕԼՍԱԹ Պաւլովին, որն և յայտարարում է, թէ այդ սպանութիւնները կատարել են ըստ „օրէնքի“ և այսուհետև էլ կը կատարեն, նոյնպէս ըստ օրէնքի“։ Մի՞թէ անամօթութեան դադաթնակէտը չէ այս, միթէ սա մի եզակի հեգնանք չէ՞, հեգնանք դէպի տառապած, արեամբ ներկուած ժողովրդի սիրտը։

Եւ չը նայած այս բոլորին, պետական դուման շարունակում է իր նիստերը, շարունակում է օրինագծեր քննել, հարցապնդումներ անել մինիստրներին։ Տաւրիկեան պալատում ճառեր են հնչում, ճառեր՝ խաղաղ և ցասկոտ, ճառեր՝ հանգստացնող և բոցավառ, ու յանձնաժողովների աշխատանքները—օրինագծեր, հողային հարցի, մահուան պատժի և այլ խնդիրների վերաբերմամբ—առաջ են գնում անընդհատ... Իսկ պալատի պատերից դուրս, նոյնպէս կամայականութիւնը ըստ առաջւան, դլխարկը թեք դրած՝ անձարձակ շարունակում է իր գործը։ Եւ ահա յաճախակի մարդու սիրտն ու հոգին լեցուում է դառնը, զայրացած զգացմունքով դէպի Ներանց, որոնք բազմած պատգամաւորական նստարանների վրայ՝ ճառեր են արտասանում—ճառեր՝ հանգստացնող, ճառեր՝ բոցավառ։ Բնական և լիովին հասկանալի զգացմունք, բայց հազիւ թէ արդար։

Պարզենք մեր միտքը։ Ոչ ոքի համար այսօր գաղտնիք չէ, որ դումայի կազմը բոլորովին այն չը դուրս եկաւ, որպիսին սպասում էր կառավարութիւնը։ Նա երազում էր ունենալ սև-հարիւրակային դումա. նոյնպիսի մի դումայի էին սպասում նոյնպէս և հասարակութեան ծայրայեղ տարրերը։ Սակայն իրականութիւնը չ'արդարացրեց ոչ այդ երազները և ոչ էլ սպասելիքները։ Պատգամաւորական աթոռները դրաւեցին „հին բեժիմի“ համոզած հաւատարդները և ջերմ պաշտպանները ոչ միայն հասարակութեան, այլև աշխատաւոր մասսաների շահերի։ „Կադետներ“-ի շարքերին կից հանդէս եկաւ աշխատաւոր խումբը“, ի մի ձուլելով իր դրօշակի տակ ռուսական պարլամենտի ծայրայեղ տարրերը։ Եւ այդ խմբի ներկայացրած ագրարային օրինագիծը երևան է գալիս որոշ չափով իբրև ձևափոխումն Սօցիալիստ-Յեղափոխականների ագրարային ծրագրի։ 14 ներկայացուցիչների կոչը ուղղած բանւորներին,—պահպանել դուման, բացարձակապէս յեղափոխական բնոյթ ունի։ Ալադինի, Անիկինի, Բօդիչեվի, Պետրունկևիչի ճառերը և առհասարակ դումայի ամբողջ ընթացքը, հէնց նրա գոյութեան առաջին երկու ամսում՝ դրոշմած են այնպիսի ատելութեամբ և արհամարհանքով դէպի կառավարութիւնը, որ վերջինը պէտք է սկսեր մի քիչ խորհել, եթէ միայն նա ընդունակ լիներ առհասարակ մի որևէ լուրջ մտածողութեան...

Այս բոլորը միասին զգալի կերպով բարձրացրեց դումայի վարկը Ռուսաստանի հասարակական կարծիքի առաջ։ Իւրաքանչիւր օր պատգամաւորները ստանում են տասնեակներով ուղերձներ, նամակներ և հեռագիրներ, բանաւորական բեզոլիւցիաներ, գիւղացիական համախօսականներ, որոնցով յանձնարարւում է դումային մինչև վերջին ծայր կռիւ մղել կառավարութեան դէմ, խստանալով նրան համա-ժողովրդական աջակցութիւն։ „Առաջ գնացէք հաստատակամ, հոգ և ազատութիւն պահանջեցէք համայն ժողովրդի համար, մի վհատեցէ՛ք, որովհետև քանի դուք մեր առջևից էք գնում, մենք կը լինինք ձեր թևն ու թիկունքը։ Մեռէք, բայց մի վերադարձէք առանց ստանալու այն բոլորը, ինչ խոստացել էք ձեզ ընտրողներին“—ահա այդ նամակների, հեռագրների, դիմումների և համախօսականների իմաստը։

Յամարձակ, առանց չափազանցութեան մէջ ընկնելու բիսկի, կարելի է ասել, որ ներկայումս բազմատանջ Ռուսաստանի հայեացքը դարձած է դէպի դուման. սովատանջ և սանձարձակ կամայականութեամբ տրորւած ժողովրդի բոլոր յոյսերը սաւառնում են Տաւրիկեան պալատի շուրջը։ Նոյնիսկ ռուսաց ծայրայեղ կուսակցութիւնների երբեմն անհաշտ ներկայացուցիչներն անգամ զգում են, որ յարձակուել դումայի վրայ իրենց՝ որոշ չափով իրաւացի՝ մեղադրանքների ամբողջ ծանրութեամբ նպատակայարմար չէ ներկայ րոպէին, որովհետև յարձակուել նրա վրայ այժմ կը նշանակի դարձել յօգուտ կառավարութեան։ Նոյնիսկ Սօցիալիստ-Յեղափոխականների մարտական կազմը անհրաժեշտ սեպեց յայտարարել մամուլի միջոցով, որ նա դադարեցնում է իր տերրօրիստական գործունէութիւնը պարլամենտական նստաշրջանի ընթացքում։ Նշանակում է, որ նա էլ մի ինչ որ բան է սպասում դումայից։ Բայց ի՞նչ։

Առաջին անգամ չէ, որ Տաւրիկեան պալատի պատգամաւորական տրիբունայից հնչում են յուսախաբ բառեր. „Մենք անզօր ենք, մեզ չեն լսում, դնանք մեր աները, ասենք ընտրողներին, որ հասել է ժամը որ հէնց իրենք իրենց ձեռքով պաշտպանեն իրենց ստանակոխ իրաւունքները, և կամ մնանք մեր փառաւոր պաշտօնատեղում“ մինչև վերջ, սակայն գիմենք ժողովրդին մի կոչով՝ մեզ պաշտպանելու ոչ միայն խօսքով, այլ և գործով, թէկուզ ուժով եթէ ուրիշ ճար չը կայ“։ Սակայն այդ օրինակ յայտարարութիւնները արձագանք չէին գտնում դումայի մեծամասնութեան ուղեղների և սրտերի մէջ։ Նա, այդ „մեծամասնութիւնը“ դեռ ևս չէ կարում իր յոյսերը բիւրօկրատիայի դէմ սկսած կռիւ խաղաղ վախճանի վերաբերմամբ, նա հաւատում է, որ դեռ հնարաւորութիւն կայ՝ իսկոյն տալու արիւնհեղութիւնից։ „Մենք ձեզ կը սպանենք օրինականութեամբ“, ասաց երբեմն Բեբելը գերմանական իշխանութեան ներկայացուցիչներին և այդ „օրինականութեան“ տակտիկը, ինչպէս երևում է, իւրացրել է նոյնպէս ռուսաց առաջին պարլամենտի մեծամասնութիւնը։ Ահա թէ ինչո՞ւ պատգամաւորները շարունակում են ճառել, բազմել յանձնաժողովներում, քննել օրինագծեր և նոյնիսկ հարցապնդումներ անել ոչ մի հաւատ չը ներշնչող մինիստրներին։ Նրանք գործում են առանց յետ ծալելու իրենց ձեռքերը, նրանք ցանկանում են անել, ինչ հնարաւոր է, որպէսզի արդարացնեն այն անսահման և սրտաշարժ հաւատը, որը ցոյց տուին նրանց ընտրողները։ Եւ ոչ մի կասկած չը կայ, որ պատգամաւորների որոշ մասը կանգ չի առնի և ոչ մի սպառնալիքի առջև, միայն թէ մինչև վերջը հասցնէ սկսած գործը։ Ամենահաւանականն այն է, որ դումայի մշակած օրինագծերից և ոչ մէկը չի հաստատուի բարձր իշխանութեան կողմից և հետևաբար իրագործումն չի գտնի կեանքի մէջ։ Ինչ արած։ Այն ժամանակ դուման մաքուր խղճով կը կարողանայ ասել՝ *feci, quod potui, faciant meliora potentes!*

Բայց արժէ՞ արդեօք գլուխ կոտրել դրա համար. աւելի լաւ չէ՞ միանգամից մաքրել հաշիւները կառավարութեան հետ և դիմել ժողովրդին, օրինակ, ընդհանուր ընտրութիւնների մի մանիֆեստով՝ հիմնագիր ժողովը կազմելու։ Եւ կամ—աւելի լաւ—զինած ապստամբութիւն յարուցանել։

Սակայն դումայի ներկայ կազմը, չը նայած իր անդամներից շատերի ծայրայեղ արմատականութեան, այդ չէ կարող անել և չէ էլ ցանկանում։ Ինչո՞ւ—մենք արդէն տեսանք։ Ուրեմն ի՞նչ անել այսուհետև։ Մի՞թէ յիրաւի սպա-

ել՝ մինչև որ կառավարութիւնը ոչնչացնի մէկը միւսի յետևից դումայի բոլոր օրինագծերը։ Բայց չէ՞ որ դա կը լինի մի ծանր տանջանք մուրացկանութեան հասցրած տառապեալ երկրի համար։

Ահա այսպիսի խոհերից է առաջ գալիս այն հակադումայական անբարեացակամ զգացմունքը, որի մասին մենք խօսեցինք վերև, զգացմունք, կրկնում ենք, օրինական, բայց հազիւ թէ արդարացի, որովհետև անհիմն է պահանջել ներկայ պատգամաւորներից աւելին, քան նրանք են անում իրենց վրայ դրուած պատասխանատուութեան գիտակցութեամբ ժողովրդի առջև, համաձայն իրենց խոհականութեան և խղճի թելադրութեան։

Ծայրայեղ կուսակցութիւնները, ինչպէս յայտնի է, անխուսափելի են համարում ընդհանուր զինուած ապստամբութիւնը Ռուսաստանում։ Հապա ինչո՞ւ այդ կուսակցութիւնների պարագլուխներից շատերը այն համոզմունքին են, որ հարկաւոր չէ դուման վարկաբեկ անել հատարական կարծիքի առջև. ո՞ւրտեղից ծագում առաւ այս սպասողական տաքտիկը՝ նրա վերաբերեալ։ Նախ այն հանգամանքից, որ զինուած ապստամբութեան անխուսափելի լինելու համոզմունքի հետ միասին՝ նրանցից իւրաքանչիւրի մէջ դեռ չէ մարած թշւառ Ռուսաստանը նորանոր արիւնհեղութիւններից ազատ պահելու կարելիութեան յոյսը, իսկ յետոյ—և այդ ամենակարևորն է—քաղաքական տարրական տակտը թելադրում է նրանց, թէ չէ կարելի, անընդպատակայարմար և անարդար է յարձակուել մի հիմնարկութեան վրայ, որին հաւատ է ընծայում համարեա՝ ամբողջ երկիրը և որի վրայ են դրուած, գոնէ ներկայ մոմենտում, աշխատող լայն մասսաների վերջին յոյսերը։

Թող կեանքը ինքը արժատախիլ անի այդ յոյսը, թող ժողովուրդը իր սեփական աչքերով տեսնի, թէ որքա՞ն ուռնայն, միամիտ է իր հաւատը դէպի բարձր իշխանութեան պատրաստականութիւնը՝ դարման անելու իր կարիքներին. թող խորտակի միանգամ ընդ միշտ նրա վստահութիւնը դէպի ցարի բարեացակամութիւնը. թող հասկանայ, որ „երկրի լաւ մարդիկը“, ժողովրդի սրտին մօտիկ խանկադին ընտրեալները անզօր են ազատութիւն և հանգստութիւն տալ նրան, քանի դեռ գոյութիւն ունին ամենակարող բիւրօկրատիան և նրան ներշնչող պալատական կամարիլլան... և այն ժամանակ... այն ժամանակ զայրացած հսկան ինքը իր սեփական ձեռքով կը հարթէ ազատութեան ճանապարհը։ Այդպէս է մտածում յեղափոխականը և—որքան էլ տխուր, որքան էլ սարսափելի չը լինի այդ—սակայն պէտք է խոստովանել, որ նրա հաշիւների մէջ աւելի ճշմարտութիւն կայ, քան թէ դումայի մեծամտանութեան...

Հիմնադիր ժողո՞վ. Զինուած ապստամբութիւն... Որքա՞ն թեթեւասրտութեամբ են արտասանում յաճախ մարտական այդ լոզունգները։ Բայց չէ՞ որ նրանց յետևից կանգնած է մի ամբողջ շարան արիւնոտ ուրուականների, որոնք անխուսափելիօրէն կը վերածուեն արիւնոտ իրականութեան հէնց ա՛յն նշանակալից օրը, երբ այդ լոզունգները խօսքից գործի կ՚անցնեն։ Հասկանալի է, որ աշխուրջ, գործնական յեղափոխականները կը ցանկանային դիմաւորել այդ օրը ռազմական լիակատար պատրաստականութեամբ, որպէսզի անխուսափելի ողբերգութիւնը վերջանայ փառատոցի յաղթութեամբ և ոչ թէ այնպէս, ինչպէս եղաւ Մոսկվեան ապստամբութեան տխուր օրերին։ Այդտեղ բաւական չէ „քաջերի խենթութիւնը“. այդտեղ հարկաւոր է, որ մասսաները միանգամ ընդ միշտ և անդառնալիօրէն գժտուին անցեալի հետ, գժտուին ոչ միայն մտքով, այլ և սրտով։ Այստեղ հարկաւոր է—յուսահատութիւն։

Եւ ընթացիկ բոլոր դէպքերը տանում են դէպի այդ կէտը—դէպի գործօն յուսահատութիւն...

Վ. ԱՐԱՐԱՏՍԿԻ

1 յուլիսի.

ԹԵՐԹՕՆ

ԿԵՆԴԱՆԻ ԹԱՂԻԱՃՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

(Թիւրքական բանտեր)

IV

Պատիժներ. Տարբերութիւն Քրիստոնեաների և մահմեդականների միջև. Ներման օրէնքը. Ոնիրները ըստ ազգութեան և տեսակի. Բանտարկեալների ընդհանուր թիւը. Եզրակացութիւն։

—

Ցանցանքները պատժելու համար Թիւրքիայում, իհարկէ, կան օրէնքներ, և դրանք բոլորն էլ վստահ կարելի է ասել, շատ բարձր են թիւրքական արդարադատութեան ընդհանուր մակերևոյթից, որովհետև առնուած են թարգմանաբար և կոյր հետևողութեամբ ֆրանսիական օրէնքից՝ առանց յաճախ ըմբռնելու նրանց էութիւնն ու իմաստը։ Կեանքի մէջ այդ օրէնքները մնում են մեռած տառեր։ Պատժի չափը կախուած է դատաւորների բացարձակ կամքից՝ նայելով թէ ինչ վերաբերմունք ունի նա դէպի յանցաւորը՝ ըստ նրա ազգութեան, դիրքի, անձնական կապերի և մանաւանդ նրա գործ դրած ոսկիների։

Ընդհանրապէս առնելով Թիւրքիայում ոչ մի յանցանք այնքան խիստ չէ պատժւում, որքան քաղաքականը։ Նախորդ գլխում մեր բերած օրինակները բաւական խոշոր ապացոյցներ են դրան։ Ամենից քիչ պատիժ կրող յանցանքը այնտեղ աւազակութիւնն է։ Սովորական պատիժը դրա դէմ երեք տարի է։ Բանտերից մէկում եղած 24 աւազակ բանտարկեալներից 23-ը երեք տարուայ պատիժ ունէին. միայն մէկն էր 6 տարուայ դատապարտուած և այն էլ նրա համար, որ տարիներ առաջ նոյն յանցանքով նշանակուած պատիժը վերջացնելուց յետոյ, նորից ձերբակալուեց և այդ պատճառով կրկնակի պատիժ ստացաւ։ Այդ երեք տարին, աւելի ճիշտ երկու տարին (մէկ տարին ներւում է, ինչպէս կը տեսնենք վերջը) շատ չնչին պատիժ է համարւում Թիւրքիայում աւազակութիւնը արհեստ դարձրած և նրանով հպարտ՝ չերքեզ, քիւրդ, թիւրք, առնաւուտ և այլ տարրերի համար, որոնց կարծիքով „մի կողքի վրայ պառկելով“ իսկ երկու տարին կարելի է անցկացնել։ Թերևս մասամբ էլ պատժի „թեթեւութիւնն“ է պատճառ ի շարս այլ բազմաթիւ պատճառների, որ Թիւրքիայում աւազակութիւնը չէ նւազում և սահմանափակւում...

Միւս յանցանքները համեմատաբար աւելի խիստ են պատժւում։ Մարդասպանութիւնը, եթէ այդ կատարուած է նախամտածուած կերպով, դատապարտւում է 15 տարուայ թիապարութեան, ինքնապաշտպանութեան դէպքում՝ 3 տարուայ։ Գողութիւնը 1—3 տարով։ Բռնաբարութիւնը՝ կատարուած աղջկայ թէ տղայի վրայ՝ դատապարտւում է 3 տարուայ բանտարկութեան։

Ցանցանքների պատիժները փոխւում են, երբ ոճիրը կատարուած է մահմեդականի կողմից քրիստոնեայի վերաբերմամբ և հակառակը։ Հէնց աւազակութիւնը, որ, ինչպէս ասացինք, Թիւրք կառավարութեան տեսակէտով՝ համարւում է ոչ ծանր պատժի արժանի մի գործ, դրա մեծ ապացոյցներից մէկն է։ Ինչպէս յայտնի է Թիւրքիայում աւազակութեան ենթարկւողը քրիստոնեայ տարրն է։ Աւազակը մահմեդականին չի դիպչում։ Շատ դէպքեր են լինում, երբ աւազակները քարվանի առաջը կտրելով, մահմեդականներին ջոկում են հայերից, նրանց ապրանքին ձեռք չեն տալիս, իսկ մնացածը խլում և ուզած ձևով բաժանում են։ Այդ շատ լաւ դիտէ կառավարութիւնը և դիտմամբ աւազակներին չը սարսափեցնելու համար ամենաթեթև պատիժն է ընտրել։ Բայց եթէ գողացածը Թիւրքի ապրանք է, լինի դա մի բարձ թէ մի չնչին զարդարանք, նա աւելի արժէք ունի Թիւրք կառավարութեան աչքում, քան հայի հարիւր ոսկի արժեցող մի հակ եւրո-

պական ապրանքը։ Հայերը շատ գոհ կը լինեին եթէ ամեն մի աւազակութիւն գէթ այդչափ պատիժ ստանար. այդ էլ չը կայ։ Երկրում կատարուող աւազակութիւնների հինգ տոկոսն իսկ չի պատժւում այդ թեթև պատժով։ Պատիժն էլ տրւում է միայն այն դէպքում, երբ աւազակը պատահմամբ գողացած ապրանքը որևէ քաղաքում ծախելիս ճանաչւում է թալանուած հայի կողմից, և կառավարութիւնը աւազակին բացարձակ պաշտպան չը ներկայանալու համար՝ ստիպւում է ձերբակալել նրան։

Աւազակութիւնը կատարուած տեղում փնտրտուքի դուրս գալ, ոստիկան ղրկել, քննութիւն նշանակել, դրանք ձեռական բաներ են։ Շատ անգամ ոստիկանները, տեսնելով աւազակներին, խորհուրդ են տալիս մօտ վայրերում չը մնալ, այլ քաշւել հեռուները. իսկ իրենք գալիս են յայտնում, թէ աւազակներ չը կան, անհետացել են... Դրանով էլ խնդիրը փակւում է։

Բանտերում եղած ուսումնասիրութիւնից երևում է, որ մահմեդականների կողմից հայերի դէմ կատարուած ոճիրները մնում են անպատիժ։ Ցաճախ կառավարութիւնը ապանուած հայերի դիակը անհետացնում է և բողոքող ազգականներին մեղադրում զրպարտութիւն մէջ։ 1892 թ. ամառը 3 զէյթունցի հայեր սպանուեցին Թիւրքաբնակ Դաղալլի և հայաբնակ Փնդրջակ գիւղերի մէջտեղը։ Ոստիկանութիւնը լսելուն պէս՝ գլուխ ունենալով բինբաշին՝ գիշերով տեղ է հասնում, այրում դիակները ու հետքը անյայտացնում։ Այն ինչ առաջուց արդէն այդ մասին արդէն լուր է տարածուած լինում Փնդրջակ գիւղում և շատ գիւղացիներ հետաքրքրւելով՝ գնացած ու տեսած են լինում։ Միհրդատեան անունով պօլսեցի մի սարկաւագ, որ այդ միջոցին այնտեղ է գտնուելիս եղել՝ պատրիարքի կարգադրութեամբ, գիւղացիներից իմանալով եղելութիւնը, մի ուրիշ տեղ մի քանի ազդեցիկ հայերի պատմում է իրողութիւնը։ Կառավարութիւնը հասկանալով թէ լուր տարածողը նա է, իսկոյն ձերբակալում է նրան՝ իբրև խռովութիւն առաջ բերելու դիտումով՝ սուտ լուրեր տարածողի։ Ինչ խօսք, որ Փնդրջակցիները, որոնք դիակները սեփական աչքերովն էին տեսել, սարկաւագի ձերբակալումը իմանալով՝ վախեցած թէ մի գուցէ իրենք էլ նեռին բանտ, քննութեան ժամանակ ուրացան ամեն ինչ և միայն դրա շնորհիւ ազատ արձակուեցան, իսկ սարկաւագը դատապարտուեց մէկ ու կէս տարուան բանտարկութեան։

Մարաշի ամբողջ սանջակում (իր հինգ զաւառները միասին) վեց տարուայ ընթացքում հայերի դէմ եղած անթիւ ոճիրներից միայն մէկը թեթև պատժի ենթարկուեց։ Սարբար Թիւրքաբնակ գիւղում, ուր միայն մի քանի ընտանիք Թիւրքահաս հայ կայ, 1899 թ. մայիսին՝ 15 գինեած թիւրքեր գիշերով յարձակւում են մի հայ տան վրայ և բռնի փախցնում աղջիկը, որ նշանուած էր իր դրացի Արթինի հետ։ Թիւրքական դատարանը 15 յանցաւորներից միայն մէկին—Մոլլա Մուսթֆային դատապարտեց երեք տարուայ բանտարկութեան՝ և այն՝ ֆրանսիական հիւպատոսի ստիպողական պահանջներին գոհացում տալու համար։ Մինչդեռ օրէնքով տան վրայ կատարուած գինական յարձակումը 15 տարուայ պատիժ ունի։ Դրա հետ միասին փեսացու Արթինին ևս 5 ամիս բանտում պահեցին, մեղադրելով, որ նա զէնքով դիմադրել է յարձակողներին... Թիւրքական արդարադատութեան մի փոքրիկ նմուշ է դա։

Դրան որամագծօրէն հակառակ, Թիւրք դատարանը խիստ ծանր պատիժ է տալիս հայերին, եթէ նրանք որևէ յանցանք են գործել թիւրքերի դէմ։ Շատերից մի օրինակ։ 1900 թ. հոկտեմբերին երկու հայ երիտասարդ՝ զէյթունցի Վարդիւոր և կապանցի Յարութիւն՝ յարձակում գործեցին Անդրբնի մտաերքը թիւրք քոչւոր մի ընտանիքի վրայ, տղամարդին վիրաւորեցին և կնոջը սպանեցին։ Հազագի՜ւտ դէպք։ Դա տեղի ունեցաւ սոսկ թալանելու մտքով։ Բայց այդ պարզ ոճիրը մի ահագին քաղաքական փոթորիկ բարձրացրեց երկու ամբողջ վիլայէթների—Ադանայի և Հալէպի շրջաններում։ Ամեն կողմ զօրքեր, խստութիւն, հալածանք։ Զէյթունի շրջականները լցուեցին զօրքերով ու վրիժառու թիւրք ամբոխով։ Զէյթունցիք ստիպուած եղան յանցաւորների յանձնել, որոնք կարճ միջոցում դատապարտուեցան առաջինը՝ մահուան, իսկ երկրորդը՝ հարիւր մէկ տարուայ բանտարկութեան։ Այն ինչ միևնոյն բանտում եղած 28 թիւրք մարդասպաններից միայն մէկն է հարիւր մէկ տարուայ բանտարկութեան դատապարտուել և այն 3 հոգի—կնոջը, զրքանչին և աներին—միանգամից սպանելու համար։

Թիւրքիայում բոլոր բանտարկեալները, բացի քաղաքական յանցաւորներից ու բռնաբարութեան մէջ մեղադրուողներից, չեն լրացնում վճռուած դատապարտութեան ժամանակամիջոցը, այլ նրա երկու-երրորդ մասը։ Ա՛ֆը-Շահանէ կոչւող այդ ներումը հնարել է սուլթան Համիդ իր թագաւորութեան առաջին տարուանից սկսած և որը գնալով այժմ օրէնքի կերպարանք է ստացել։ Տարբերութիւնը նրա մէջն է, որ ներման դէպքում՝ հրամանը պէտք է գայ հեռագրով Պօլսից՝ սուլթանի իրատէի համաձայն, որ տրւում է թիւրքական մեծ տոներին՝ տարուայ ընթացքում 4—5 անգամ՝ Մէվլուտին (Մահմեդի ծննունդ) բայրամներին և սուլթանի ծննդեան ու գահակալութեան տօներին։ Այդ հեռագրի համաձայն, նոյն օրն և եթ արձակւում են այն բանտարկեալները, որոնք լրացրել են իրենց պատժի երկու-երրորդ մասը։ Որ այդ ներումը չէ տարածւում քաղաքական յանցաւորների վրայ, իբրև սուլթանի գերիշխանութեան դէմ բողոքող, ընդվզող տարրի, դա հասկանալի է, բայց որ սուլթանը այդ ներումից զրկում է նոյնպէս և բռնաբարութիւն կատարողներին, այդ է որ ներկայանում է իբրև մի մեծ „թիւրիմացութիւն" և յամենայն դէպս վերին ատիճանի անախորժ՝ քաղաքական յանցաւորների ինքնասիրութեան համար, որոնք ուրախ կը լինէին այդպիսի վիճակակիցներ չունենալ...

Դառնանք այժմ մի փոքր վիճակագրական համեմատութեան։ Վերցնում ենք իբրև յենակէտ մի շրջան, ուր ապրում են թիւրքեր, հայեր, քիւրդեր և չէրքէզներ։

Մարաշի սանջակում, որի մէջ մտնում են Զէյթունի, Ալպիստանի, Անդրբնի, Կոկիսանի և Բազարջիկի զաւառները, ազգաբնակութեան թիւն է մօտ 195 հազար, որից 109 հազարը թիւրք, 57 հազարը՝ հայ, 24 հազարը՝ քիւրդ և 5 հազարը՝ չէրքէզ։ Վեց տարուայ ընթացքում այդ շրջանի բանտարկեալների թիւը երբէք չէ իջել 170-ից և չէ անցել 240-ից։ Դրանցից թիւրքերը՝ նաազագոյն 122, առաւելագոյն 133, հայեր՝ 19 և 53, քիւրդեր՝ 25 և 48, չէրքէզներ՝ 4 և 6։ Նկատելի է հայ ու քիւրդ բանտարկեալների երբեմն խիստ աճումը—հայերինը՝ իբր հետևանք յաճախակի կրկնուող քաղաքական ձերբակալութիւնների, իսկ քիւրդերինը՝ աշիրէթական կռիւների պատճառով կատարուող խմբական ձերբակալութիւնների։ Ըստ յանցանքի, այդ թւից սովորական գողերը կազմում են 62 և 68, քաղաքական յանցաւորները՝ 12 և 43, մարդասպաններ՝ 27 և 30, աւազակները՝ 21 և 24, աշիրէթական ընդհարումների և գլխաւորապէս աղջիկ փախցնելու խնդիրով՝ 28 և 50, աղջկայ բռնաբարում՝ 13 և 16, տղայի բռնաբարում՝ 7 և 9։

Եթէ հայ ընդհանուր բանտարկեալներից հանենք քաղաքական յանցաւորները, կը մնայ 7 և 10, որից երկուսը մարդասպաններ, իսկ մնացածը մանր գողեր։ Համեմատելով ոճրագործների թիւը ազգաբնակութեան թւի հետ, տեսնում ենք որ իւրաքանչիւր տաս հազար բնակչին ընկնում է հայերի մէջ մօտ երբեմն 1 և երբեմն 2 յանցաւոր, թիւրքերի մէջ՝ 11 և 12, քիւրդերի մէջ՝ 10 և 20, չէրքէզների մէջ՝ 8 և 12։ Մինչդեռ բանտարկեալների մէջ ընդհանուր առմամբ հայերը քաղաքական յանցաւորներ են, միւս ազգերից և ոչ մի քաղաքական յանցաւոր չը կայ։ Թիւրքերի շրջանում ամեն տեսակ ոճիրներ կան խառը, այնպէս որ դժուար է ասել, թէ որ ճիւղն է աւելի զարգացած. մի բան որ աչքի է զարնում, դա՝ տղաների բռնաբարման ախտն է՝ որ տարածուած է միայն նրանց մէջ, այն էլ՝ քաղաքներում։ Քիւրդերը յայտնի են գլխաւորապէս աշիրէթական կռիւների և աւազակութեան ճիւղերում, իսկ չէրքէզները միայն աւազակութեան մէջ։

Թիւրքիայում եղած ընդհանուր բանտարկեալների թւի մասին մօտաւոր գաղափար կազմելու համար

(ճիշտ ստատիստիկ թերևս Պոլսի կառավարութիւնն իսկ չ՚ունենայ) մենք կը վերցնենք մի վիլայէթի բանտարկեալների վիճակագրութիւնը, որ ժողովել ենք տեղն ու տեղը։ Դա Հալէպի վիլայէթն է, որը համեմատած Թիւրքիայի այլ մասերի—հայկական, արաբական մակեդոնական վիլայէթների հետ—շատ աւելի անդորր վիճակ ունի։ Հետևաբար եթէ մենք բոլոր վիլայէթներում բանտարկեալների նոյն թիւն ընդունենք, ինչ որ Հալէպ վիլայէթումն է, դա ոչ միայն չի լինի չափազանցրած, այլ ընդհակառակը՝ իսկականից էլ պակաս կը լինի։

Բանտարկեալների թիւն է՝ Հալէպ քաղաքում՝ 1055, Մարաշի սանջակում՝ իր գաւառներով միասին՝ 240, Ուրֆայի սանջակում՝ իր գաւառներով միասին՝ 264։ Հալէպին անմիջական կերպով ենթարկւող գաւառներում — Այնթապ՝ 95, Անտիոք՝ 86, Քիլիս՝ 63, Այէքսանդրէտ՝ 45, Նիզիբ՝ 25, Բէյլան՝ 23, Իդլիբ՝ 21, Հարեմ՝ 15, Ջօրուլ՝ 12, Ռահա՝ 8։ Ընդամենը՝ 1952։ Սրա վրայ պէտք է աւելացնել մանր կուսակալների ու տուրքեր չը վճարելու պատճառով ամենօրեայ ձերբակալեալների թիւը, որ այդ վիլայէթում մօտ 200-ի է հասնում։ Գումարը՝ ամբողջ վիլայէթում՝ 2152։

Մենք հաշուի մէջ չենք առնում այն բազմաթիւ խեղճ ու կրակ պանդուխտները, որոնք գիւղերից հաւաքւում են կետրօնական քաղաքները հասարակ բանւորութեամբ իրենց օրապահիկը ձեռք բերելու և որոնց, որպէս թէ գքերէ չունեցողների՝ կառավարութիւնը ժողովում է ոստիկանատներում և ապա նրանցից աքսորեալների կարաւաններ կազմելով՝ ձիաւոր ժանդարմների հսկողութեամբ քշում է դէպի իրենց հայրենիքը։ Բազմաթիւ բանտերում քաշ գալով՝ այդ քաղցածների խմբերը երբեմն շաբաթներով ու ամիսներով ստիպւած են քայլել ու յաճախ հիւանդ, ուժասպառ, մահւան դուռը հասած՝ միայն իրենց օջախը ընկնել։

Այդ հաշուով Թիւրքիայի 28 վիլայէթներում պիտի լինին մօտաւորապէս 60,000 կալանաւոր։ Բացի 28 վիլայէթներից Թիւրքիայում կան նաև 7 սանջակներ (էլվիէ Մուստահիլիէ), որոնք չեն ենթարկւում որևէ վիլայէթի, այլ կապւած են ուղղակի Ս. Պոլսի հետ և որոնցից իւրաքանչիւրում միջին թւով 450 բանտարկեալ կայ։ Գումարը՝ 3150։ Թիւրքիայում կան 8 գաւառներ (բերդ) ուր բոլոր աքսորւածների թիւը 3000-ից աւելի է։ Այս երկու թւերն էլ առնելով վիլայէթներում գտնւող թւերի հետ՝ Թիւրքիայում եղած բանտարկեալների ընդհանուր գումարը կազմում է մօտ՝ 66000։

Այդ թիւը, գուցէ խոշոր ինքն ըստ ինքեան, համեմատաբար աննշան, եթէ ի նկատի ունենանք, որ օսմանեան պետութեան մէջ, ուր կայ 22 միլիոն ժողովուրդ, կատարւում են աւելի ոճիրներ, քան աշխարհիս որևէ անկիւնում։ Այդ քչութիւնը բացատրւել կարող է միմիայն այն հանգամանքով, որ սուլթանների երկրի մէջ յանցանքի մի շատ աննշան տոկոսն է ենթարկւում պատասխանատուութեան և պատժի, մինչդեռ մեծագոյն մասը մնում է անպատիժ, ազատ՝ շարունակելու ամէն տեսակ ոճիրներ։ Թիւրք պաշտօնեաները լինելով քաղաքական „ոճրագործ“ պայմանների զաւակներ, նոյնպիսի անտարբեր վերաբերմունք են ցոյց տալիս դէպի ամէն մի կործանող արարք, որպիսին ցոյց է տալիս ինքը՝ Թիւրք ամբողջ ռէժիմը և կայր ամբոխը։ Ամենաբարձր Թիւրք պաշտօնիայի մէջ երբէք չէք տեսնի զղջանք, զայրոյթ դէպի մի ոճիր, որ քաղաքակրթւած հասարակութեան մէջ ընդհանուր ցասում է առաջ բերում։ Կործանելը, աւերելը, ոչնչացնելը միս ու արեան է փոխւել Թիւրքի մէջ և տարօրինակ չէ, որ պաշտօնեան փոխանակ պատժելու ոճրագործին, նրան ազատում է կամ այն պատճառով, որ նա Թիւրք է և կամ այն պատճառով, որ նա մնասում է ոււած „գեաւուրին“, առանց մտածելու և հասկանալու, թէ այդ մնասը ընդհանուր հայրենիքինն է։ Հայրենիքի և արդարութեան գաղափարն այնքան աղօտ, այնքան խաւար է Թիւրք ամբոխի, հոգևորականի, պաշտօնեայի մէջ, որ նա չի կարող հասկանալ, թէ մի և նոյն հայրենիքում կարող են լինել և մահմեդականներ և քրիստոնեաներ և որ արդարութեան տեսակէտը պիտի լինի հաւասար բոլորի համար—առանց խտրութեան կրօնի և ազգի։

Եւ շրջում են ոճրագործները ազատ, անվախ երկրի մի ծայրից մինչև միւսը, իբրև լայնատարած օրսատեղի իրենց աւերիչ յարձակումների համար։ Քաղաքակիրթ հանկումներով տարւած տարրերը արիւնաքամ են լինում։ Աշխատաւոր ժողովուրդը գոսանում է։ Երկիրը դատարկւում է։ Արեան հոտը տարածւում է ամէն կողմ և հասնում Կ. Պոլիս՝ մինչև իսկական՝ Թիւրքերի քիթը, մինչև Համիդի ապարանքը և այնտեղ, ստրկացնող պալատի մէջ, ամենքը յափշտակւած այդ հոտով՝ փառաբանում են Ալլահին, որ վերջապէս „գեաւուրները“ թողնում են իրենց երկիրը։ Ընդարձակ, մահաբեր ռէժիմի ներկայացուցիչները կուրացած՝ չեն տեսնում ամբողջ երկրի քայքայիլը, ուժասպառ լինելը, չեն նախատեսնում այն վիթխարի գնցումը, որի ստեղծած աւերակների տակ պիտի թաղւին իրենք, հէնց այդ մաշալլահ գոռացողները։

Ցնքում է ամբողջ երկիրը ոճիրների ցաւից, ժահրակալ վերքերից, տնքում է այն անօրինակ ճնշումից, որի աղբիւրն ու խթանը բռնակալութեան կետրօնն է, սուլթանների արիւնոտ ապարանքը, Բօսֆորի ափերի այդ եղեգի բռնատունը, ուր փառաբանւում է ոճիրի աստուածը։

Եւ բոգոքողները՝ ազատութեան ու վերածնութեան մշակները հպատակական, սրով ու հրով պատած՝ գնում են բանտերը—բռնակալութեան դոյութիւնը փատաբանող այդ ժամանակաւոր ու անարգ կոթողները,—ուր մահացնող ռէժիմը յոյս ունի շղթայել միտքն ու բողոքը, յոյսն ու իդեալը։

Ունայն, անմիտ յոյսեր։ Բանտը չէ, որ պիտի կանգնեցնէ սկսւած կործանումը,—նախանշանը գալիք մեծ վերածնութեան։

ՄԱՐ

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

„Դրօշակի“ խմբագրութիւնը յուլիսի 22-ին հեռագրական դիմումն արեց Պարիզ, Լօնդօն և Բրիւսել, թիւրքահայց դատի կողմնակից պատգամաւորներին, պնդելով՝ պաշտպանել մեր դատը, իբրև միջազգային դատ, Լօնդոնի Միջպարլամենտային կնգրէսի առջև։ Կնգրէսը, որին ներկայ էին 600 պատգամաւորներ բոլոր երկրներից, բացւեց յուլիսի 23-ին և տևեց երեք օր։ Հեռագիրը Լօնդոնից հաղորդում է այդ մասին հետևեալը. „Ժողովը ընդունեց Լօրանի (Բելգիայից) բանաձևը, որով առաջարկւում է Լ-ահէյի կնգրէսին՝ միջոցներ ձեռք առնել, հարկադրելու Թիւրքիային՝ յարգել միջազգային դաշնագրերը և տալ հայերին նոյն իրաւունքները, ինչ որ վայելում են Թիւրքերը“։

Մանրամասները կը հրատարակենք յաջորդ անգամ։

*

Հայրենի մինիստրների խորհրդի նախագահ դարձած՝ Սաուլիպին, Դուման ոչնչացման ամենաջերմ կողմնակիցը, յուլիսի 24-ին ուղարկեց կովկասեան փոխարքային մի հեռագիր, լի խրախուսիչ ապառնալիքներով. „Անկարգութիւնները պիտի սանձահարւին“—ասում է հանրածանօթ եղբիտ-մինիստրը, վստահ, որ „հասարակութեան լաւագոյն մասը առջևակից կը լինի այդ գործին“... Դուրս եկէք ձեր որջերից, լաւագոյն սև-հարիւրակներ, ցարի աջ ձեռքը ձեզ գործի է հրաւիրում...

*

Ֆրանսիական պարլամենտը իր նստաշրջանի վերջին ժողովում թոյլ տւեց մի գործողութիւն՝ անպատւաբեր թէ՛ հանրապետութեան և թէ իր անւան,—նա հրաժարւեց ընդունել սոցիալիստների առաջարկը՝ հանակրանք յայտնելու Ռուսաստանի երիտասարդ Դումային և նոցանք՝ բռնաւոր ցարիզմին։ Մինիստր-նախագահի ցանկութեան համաձայն՝ նիստը փակւեց ճիշտ այն րոպէին, երբ առաջարկի հեղինակները պահանջում էին լսել իրենց ձայնը։ Դա մի վրդովեցուցիչ փաստ է, անհասկանալի մանաւանդ այն պատճառով, որ հանրապետական կառավարութեան ղեկը

գտնուում է այնպիսի մարդոց ձեռքում, ինչպէս՝ Կլեմանսօ և Բրիան...

*

Հայոց եկեղեցու ներկայացուցչի վերջին կոնդակը, նուիրուած եկեղեցական սահմանադրութեան, առանց հակացոյցի չ'անցաւ։ Էջմիածնի միաբանական 14 անդամներ, ոմանք յայտնի իրենց խիստ պահպանողականութեամբ, միւսները իրենց արտաւոր անցեալով, դիմեցին Կաթողիկոսին, մի „բողոքագրով՝, որի իսկական իմաստն է՝ չը զրկել հոգևորականութիւնը իր դարաւոր արտօնութիւններից, և թոյլ տալ, որ նա շարունակէ տիրել և աղօթել, աղօթել և տիրել... Իրաւունք ունէինք սպասելու, որ հայկական մեծ տաղնապի այս սև օրերին՝ հայոց կղերը, ինչքան և պակասաւոր, այդ օրինակ յանդուգն ցոյց չ'անէր ժողովրդի դէմ, որ մեր բոլոր տանջանքների և ցաւերի միակ կրողն է ներկայ օրերին։ Սակայն կղերը անուղղելի է և անզգայ։ Եւ մնում է, որ առաջիկայ կենտրոնական ժողովին՝ նա վճռական պատիժ ստանայ և մի անգամ ընդ միշտ ճանաչի իր համեստ դերն ու տեղը։ Այդ ժողովի գումարման առիթով Գաշնակցութեան Արևելեան Բիւրոն հրատարակել է մի շրջաբերական, որի մէջ՝ ի միջի այլոց, ասուած է. „Մեր ղեկավարող սկզբունքները այդ գործում պիտի լինին՝ 1) Կատարեալ ժողովրդապետութիւն՝ հասարակական բնոյթ ունեցող բոլոր գործերում. 2) Քառանդամ ընտրողական սիստեմ, բոլոր գործերում. 3) Ուսումնարանների և կալուածների կառավարիլը բոլորովին զատել հոգևորականութիւնից. 4) Հոգևորականներին թողնել միմիայն դաւանանքային և ծիսական մասը. և 5) Խղճի կատարեալ ազատութիւն“։

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԴ

ՏԵՐՐՕՐ

Հ. Յ. Դ. Մ.-ի մարմնի վճռով տէրրօրի ենթարկուեցաւ Հինդ-Քաղաքի (Սալմաստ, Պարսկաստան) մէջ նոյն այդ քաղաքի բնակիչներէն Սառայի լաճ Յակոբ Գրիգորեանը— յայտնի մատնիչ, ժողովրդի կեղեքիչ և նախկին փոխանորդ Խոյի տանգակ հիւպատոսի։ – Ժողովուրդը անիստիլ՝ հայ, հրէայ, թուրք՝ օրհնում է կտրիճի ձեռքը, որ վերջ տուաւ դաւաճան կեանքին։ Տէրրորիստները ազատ են։

21 մայիս, 1906.

Հ. Յ. Դ. Մ.-ի մարմին

Հասատեղ՝ Հ. Յ. Դ. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՕՄԻՏԷ

ՆԻՒԹԱՏՈՒՊԻՆ

Արևմտեան Բիւրօն ստացած է՝

Զուիցերիա—Մ. Թ.-էն ուէր 25 ֆրանկ, Անյայտէն 10 ֆր.։

Ֆրանսիա—Սէն-ֆօսք՝ Ասլան Կարօէն 10 ֆր. նոյն քաղաքէն *Mousha* 5 ֆր.։

Գերմանիա.—Ստուտգարտ եղբ. Յակ.-էն 10. 50.։

Ընդ. գումար 60 ֆր. 50 սանտ.։

Սվէբատնդրոյ Ենթակոմիտէն՝

Հանգանակ. զէնքի համար 235 դահեկան 20 փարու, Նազարէթ, Նշան զէնքի համար 228, Զեռֆ խմբից անդամավճար 130, եւս 10, Խոզանդաղ խմբից 600, Ինժէնիօրից 97. 20, Մ. Կ.-ից տուգանք 20, Բարեկենդանի հանգ. զէնքի համար 214, Փոքրիկ խմբից զէնքի համար 89 դահեկան։ Գումար 1624 դահ. ողջ։

Ռականատպատի Կ. Կոմիտէն՝

ԱՆԴՐՅՈՒՍՏԻ Կ.-էի, յունիս 20-ից մինչեւ դեկ. 30-ը 905 թ.՝ Հեռեւեալ խմբերից՝ Գոնարիկ 15, Շղթայ 4, Արեւեսաւորաց 79. 90, Երկաթ 21. 35, եւս 3. 80, Արեւեսաւորաց 11, Վազգէն 8, Դժոխք 4. 50, Կարօ 9. 75, Պեսօ 8. 50, եւս 8. 50, եւս 9. 50, Դժոխք 3. 50, Թումանց 10, Դժոխք 4, Բարկէն-Սիւնի 12. 60, Կայծակ 2. 55, Վազգէն 4. 50, Ծաղիկ 11, Արամ գիւղի Անդրանիկ 50, Կարօ 7. 45, Թումանց 11. 25. Բարկէն-Սիւնի 3. 10, Վազգէն 22, Կոկոն 4. 15, Արեւեսաւորաց 12, Երկաթ 8, Շղթայ 6. 20, Սերովբ-փաշա 12. 55, Տալլորիկ 8, Անդրանիկ 11. 25, Պեսօ 24. Գոնարիկ 20, եւս 8, Զաւօ 26, Ցասմիկ 8, Զալալանց 214. 50, N. N. (տուգանք) 500, Հանգանակած հարսանիքում 2. 22, եւս 11. 70, եւս 36. 71, Նոյեմբ. 24 Անդրապ. Ֆ. ենթակ-էի տւած երեկոյթից 170, Հանգանակութիւն հարսանիքում Հրայրի միջ. 15. 10, Սերովբ-փաշա խ. տւած երեկոյթից 71.53, Կայծակ խ. ուէր 5: ԴԱՐԻԱ ԵՆԹԱԿ. հանգանակութիւն 69. 50, եւս անդամավճար 70. 50, եւս 10, եւս Վ.տակ խ. 79, եւս ուէր մի հաս „Մարտինի“ հրաց. 10 հաս փամփ. ՍԱՀՄԱՆԱԲԵՐԴ ԵՆԹԱԿ. 30,: „ՈՍԿԵՄԱՑՐ“ ԵՆԹԱԿ. 2 անդորրագրով անդամավճ. յունիս-սեպտ. Կապոյտ բերդ 56, Սարսափ 19. 50, Ռեսուլի 62, Զէյթուն 56. 50, Հրաբուխ 13. 85, Բաճճի 32, Արծրունի 17, Եւթաղ 18. 25, Կայծակ 34. 50, Զրաղաց 28. 44, Անդրանիկ 36, Դաւիթ-Բէկ 19. 80,: ԱԻԱՋ ԵՆԹԱԿ-է ուէր ստացած 500 հաս N°1 ա. Մեհեղի հայերից հաւաքած Կարոյի միջոցով,ուիրատուներն են՝ Վ. Տ. Ց. 100 դրան, Դ. Տս. 50, Օտարիկ 60, Էն or. 50, Դ. Պեռ. 20, Գիւղական մանուկ 61, Կ. Հ. Է. Դ. 70, Սպօղ 60, Ց. Բաղ. 30, Տ. Բոչ. 30, Պ. ջան 10, Ա. աղ. 30, Ա. Տ. Ցով. 10, Ե. Գր. 200, Պ. Գե. 80, Խ. Գ. 30, Անօնիմ 30, Ոմն 80, Ա. Մի. 200, Շանթ 20, Ասգ. 30, Ց. Ց, Հեռ. 250: Գումար 2393 ռուբլի 82 կ.:

ԿԱՊՈՅՏ ԳԵՏԻ „ԱՆԱՐԱՏ“ ԵՆԹԱԿ. 1904 նոյեմբերից սկսեալ մինչեւ 1906 յունուարի 10-ը բոլոր խմբերից ստացւած է ամսավճար 870. 44, Տուգանք Վանք գիւղում 31, 1905 եւ 1906 Ջորենէրի տօներին հանգանակած 190. 25: Գումարն է 1091 ռ. 69 կ.:

ԿԱՐՄԻՐ-ԺԱՅՈ ենթակ.-է 1905 թ.՝ Անդամավճար. Կարմիր ժայռ խ. 178, Առաջի քայլ խ. 72, Առաջի յոյս խ. 4, Կարմիր Խաչ 71, 50 Ղարադմ. Վ.ռ.ժ. Վան. 15. 35, Անդրան. Ալիք. Հրայր. 22. 15, Նուէրներ անդորրագ. Կարմիր ժայռ 450, N առանց անդ. Կարմիր ժայռ 455, N Երկու անհատից 500, Աւեսիքից Կարմիր ժայռ 168, եւս Առաջի յոյս 24, եւս Առաջի քայլ 43. 65, Համերգից 21, Տուգանք 16, Գրքերից եւ նկարներից 32. 75, Ծախած իրերից 194, Խնջոյքից 29. 21, Վիճակախաղից 3. 15, Այլ եւ այլ 27. 20: Գումար 2340 ռ. 63 կ.:

ՔԱՆԴԻԱԾ ՔԱՂԱՔԻ ենթակ. էից 1905 թ. նոյեմբերից մինչեւ դեկտեմբերի վերջը՝ հետեւեալ խմբերից՝ Հերոս 18, Աշոտ երկաթ 16.30, Մամիկոնեան 14, Հերոս 18, Աշոտ երկաթ 16. 30, Մամիկոնեան 12, Կայծակ 7, Հերոս 15. 50, Աշոտ երկաթ 17. 30, Մամիկոնեան 18, Կայծակ 7, Սուրհանդակ 5. 25, Աշոտ երկաթ 131: 1906 թ. յունուար 1-ից ապրիլի 18՝ հետեւեալ խմբերից Կայծակ 7. 50, Հերոս 16. 50, Սուրհանդակ 3. 05, Մամիկոնեան 8. 50 Կայծակ 7. 50, Հերոս 18. 50, Սուրհանդակ 3 05, Մամիկոնեան 10. 50, Ռոյր խ. հանգանակած 71, Երեկոյթից 150, Ապառաժից 30, Մի ումից 1, Տուգանք մտից 10, եւս Կորանից 6, Խնջոյքից 35, Խորհուրդ մեծից 30, ուէր Պ. Դ. 30: Գումար 733 ռ. 85 կ.:

Ընդանուր գումար 6559 ռուբլի 99 կոպէկ:

Պոլսոյ Գեղ. Կոմիտէն՝

Պուրէի ենթակոմիտէի 1906 յունուար—մարտ:

Փորիկ Սեպուհ 500 ֆրանկ, Անանիա 200, Վազգէն խ. ընկերներէ 170, Սար 100, Ե. Ա. 50, Վաքան 40, Յ. Շ. 30, Ա. Թ. 35, Տ. Մ. 30, Տ. Փ. 30, Յ. Փ. 30, Խ. Մ., Ն. Ս., Կ. Պ., Օ. Զ., Ա. Ճ. Եղբ. Գր., Ց. Տ., Լ. Ա., Ա. Խ., Ա. Բ., Գ. Գ., Ն. Գ., Յ. Խ., Կ. Մ., Գ. Գ., Խ. Յ., 20-ական: Ս. Ց., Ս. Խ., Կ. Պ. 15-ական: Զ. Մ, Գ. Ա., Խ. Փ., Գ. Ի., Կ. Ի., Մ. Բ., Ե. Բ., Յ. Պ, Ս. Գ., Մ. Յ., Ա. Մ., Թ. Ն., Ա. Գ., Ց. Պ., Ց. Պ., Ս. Թ., Ա. Թ, Յ. Ա., Կ. Շ, Պ. Մ., Կ. Ա., 10-ական. Յ. Թ., Մ. Թ., Թ. Մ., Ց. Կ., Ռ. Կ., Եղբ. Խ. Ն., Ց. Ա., Խ. Մ., Թ. Կ., Կ. Մ., Մ. Օ., Մ. Լ., Ս. Փ., Թ. Խ., Բ. Ա., Ա. Պ., Մ. Պ., Տ. Խ., Ֆ. Ս., Ա. Պ., Վ. Փ., Պ. Է., Գ. Ս., Օ. Գ., Ն. Իս., Թ. Յ., Մ. Գ., Գ. Ն., Մ. Կ., Յ. Ա., Տ. Պ., Ց. Կ., Տիկ. Փ., Մ. Տ., Ց. Է., Մ. Յ., Պ. Թ., Կ. Մ., Կ. Մ., Կ. Բ., Հնի. Ց., Մ. Ց., Ա. Մաս., Մն. Ս., Գ. Պ., Կ. Վ., Օ. Ա., Ա. Պ., Ա. Զ., Օ. Գ., Ց. Բ., Պ. Խ., Լ. Խ., Ն. Ց., 5-ական: Ե. Մ. 8, Ս-Կ., Կ-Փ., 4-ական: Մ-Է., Յ-Մ., Յ-Ս., Գ-Մ., Ն-Ս., Կ-Պ., Վ-Ց., Ն-Ց., Ց-Պ., Օ-Մ., Ս-Մ., Ա-Ց., Մ-տէր Մ., Բ-Բ., Տ-Մ., Ց-Բ., Կ-Ց., Թ-Պ., Օ-Շ., Մ-Պ., Ց-Ս., Ե-Ս., 3-ական: Ա-Կ., Գ-Ա., Խ-Գ., Փ-Էմ., Ց-Գ., Գ-Ց., Ս-Ց., Մ-Գ., Գ-Պ., Ա-Ց., Գ-Մ., Պ-Ս., Փ-Մ., Ի-Թ., Հ-Մ., Մ. Վ., Ե-Մ., Ն-Ի., Ց-Կ., Ե-Ի., Ա-Պ., Ա-Ն., Խ-Պ., Ոմն-, Ա-Ց, Լ-Ց., Ց-Հ., Գ-Վ., Գ-Տ., Կ-Ե., Մ-Պ., Գ-Թ., Ց-Փ., Պ-Պ., Կ-Հ., Ս-Մ., Ս-Գ., Գ-Մ-Ս-Ա., Ս-Ս., Շ-Մ., Վ-Շ., Կ-Ս., Կ-Փ., Վ-Զ., Բ-Մ., Մ-Ղ., Ռ-Պ., 2-ական: Ա-Մ- 2. 50, Բ-Գ., Հ-Տ- 1. 50-ական: Գ-Ս., Ա-Մ., Գ-Մ., Ա, Ց., Գ-Պ., Զարէհ., Խ-Մ., Ց-Մ., Հ-Ա., Սրապ. Տիգրան, Լ-Թ., Ա-Գ., Ս-Մ., Մ-Ս., Ա-Ա., Տէր Ց., 1-ական: Տիկնանց հանգանակութենէ 325-50: 1906-ի յունվ. փետր. մարտ ամսավճարներ հետեւեալ խմբերից՝ Արամ տիկն- 44 ֆրանկ, Շահէ տիկն- 31, Կովկաս 54, Նէվրուզ 36, Վազգէն 41, Կայծ 30, Ֆէդայի 42, Սէրէմնեան 35, Անդրանիկ 60. Զէյթուն 34, եւ հանգանակութեան առիթով Վանչօ Բէքրօէն 700 ֆր.: Գումար 3709 ֆրանկ 50 սանթիմ.